

Հիմնադիր՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ISSN 1829-1155

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝
Գագիկ Հարությունյան
Վահե Ստեփանյան
Վոլոդյա Հովհաննիսյան
Վալերի Պողոսյան
Առուշան Հակոբյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳՐԻ

3(81)
2016

© ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1239-1254)

- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1239 - 1 ղեկտեմբերի 2015 թվականի).....5
- * 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՓՈՓՈԽՈՂ 15-ՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1240 - 1 ղեկտեմբերի 2015 թվականի).....13
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱՐԻՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1241 - 1 ղեկտեմբերի 2015 թվականի).....17
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԳՐՈՂՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԲՆԱԿԱՆ ՄՈՐԹՈՒՑ ՀԱԳՈՒՍՏԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԴԻՐՔՈՎ ՀՄԿԻՉ (ՆՈՒՅՆԱՅՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1242 - 1 ղեկտեմբերի 2015 թվականի).....22
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1243 - 4 ղեկտեմբերի 2015 թվականի).....26

- * ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ, 8-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ
«ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1244 - 8 ղեկտեմբերի 2015 թվականի)30
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ
«ՍԵՅՄՍԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ» (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1245 - 15 ղեկտեմբերի 2015 թվականի)53
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1246 - 15 ղեկտեմբերի 2015 թվականի)57
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԿԻՑ
ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1247 - 15 ղեկտեմբերի 2015 թվականի)60
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐՐՈՐԴ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1248 - 15 ղեկտեմբերի 2015 թվականի)63
- * ԱԼԻՍԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 414.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1249 - 22 ղեկտեմբերի 2015 թվականի)67
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ - ԾՐԱԳԻՐ 2»
(ԸՆԹԱՅԻՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ

ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1250 - 25 դեկտեմբերի 2015 թվականի)	79
* «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1251 - 19 հունվարի 2016 թվականի).....	83
* ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 244-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1252 - 26 հունվարի 2016 թվականի).....	94
* ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 53-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1253 - 2 փետրվարի 2016 թվականի).....	108
* ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐՏԳԵՋ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 156-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 160-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1254 - 9 փետրվարի 2016 թվականի).....	122

• **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

* ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ	135
* ՀԱՄԱՏԵՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	136
* ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԿԿԱՅԱՆԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	137
* ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԻ ԱՅՅԸ	138
* ՀՅՈՒՐԵՐ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ	139



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի
(զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նա-
զարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հան-
րապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի
Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղա-
կալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածներին,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի օգոստոսի 26-ին ստորագրված՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորություններին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2015թ. նոյեմբերի 16-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Գործն ընդունվել է քննության ՀՀ սահմանադրական դատարանի 24.11.2015թ. ՄԴԱՈ-67 որոշմամբ:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր և բանավոր բացատրությունները, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ ՎԶՄԲ) միջև ստորագրվել է 2015թ. օգոստոսի 26-ին:

2. Ըստ Համաձայնագրի՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Համաձայնագրի Առաջին առդիքում նկարագրված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու նպատակով համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը (այսուհետ՝ Վարկառու) տրամադրել քառասուն միլիոն ԱՄՆ դոլար (40,000.000 ԱՄՆ դոլար) վարկ: Վարկի տոկոսադրույքը փոփոխական է (լողացող) և հավասար է վարկի արժույթի բազային տոկոսադրույքին՝ գումարած փոփոխական սփրեդը:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Վարկի տրամադրման համար փոխառու միջոցների հաշվին վճարել միանգամյա միջնորդավճար՝ վարկի գումարի մեկ քառորդ տոկոսի (0.25%) չափով, և պարտավճար՝ տարեկան կտրվածքով վարկի չառհանված մնացորդի մեկ քառորդ տոկոսի չափով:

Վարկի սպասարկման համար վճարումների հաճախականությունը

կիսամյակային է: Մայր գումարի մարման եղանակը նույնպես հավասարաչափ կիսամյակային վճարումներով է: Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից 14.5 տարին՝ արտոնյալ:

3. Համաձայնագրում նախատեսված են Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարումն ապահովող դրույթներ, Ծրագրի իրականացման մեխանիզմները և երաշխիքները, Վարկի միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողության որոշակի մեխանիզմներ, ինչպես նաև Համաձայնագրի գործողության համար անհրաժեշտ այլ պայմաններ:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է նաև հետևյալ պարտավորությունները.

- Վարկի հիմնական գումարի վճարումն իրականացնել Համաձայնագրով նախատեսված մարման ժամանակացույցին համապատասխան (Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.07 կետ),

- հայտարարել Ծրագրի նպատակների նկատմամբ Հայաստանի Հանրապետության հանձնառության մասին եւ Ծրագիրն իրականացնել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակի (**այսուհետ՝ ՏԾԻԳ**) միջոցով՝ Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինության (**այսուհետ՝ ՀԱՃՏ**) օգնությամբ (Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.01 կետ),

- մինչեւ Ծրագրի ավարտը ՏԾԻԳ-ը պահպանել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության ներքո, որը պատասխանատու կլինի Ծրագրի կառավարման, համակարգման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման համար (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 1-ին բաժնի Ա1 կետ),

- թույլատրել ճանապարհների եւ մայրուղիների նախագծման եւ շինարարության ստանդարտացման Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկվող ստանդարտների օգտագործումը (ի հավելումն ազգային ստանդարտների) Ծրագրի շրջանակներում իրականացվող ճանապարհային կառույցների նախագծման եւ շինարարության մեջ (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 1-ին բաժնի Ա2 կետ),

- բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուն եւ Բանկը (ՎԶՄԲ) այլ համաձայնություն են ձեռք բերում, չեղյալ չճանաչել, չփոփոխել, չկասեցնել, չհրաժարվել կամ այլ կերպ չձախողել Գործառնական ձեռնարկի կամ վերջինիս դրույթների կատարումը (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 1-ին բաժնի Բ կետ),

- ապահովել Ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթներին համապատասխան (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 1-ին բաժնի Բ2 կետ),

- մինչև Ծրագրի ավարտն ապահովել, որ Ծրագրի շրջանակներում Կենսական նշանակության ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն բյուջետային բավարար միջոցներ (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 5-րդ բաժին),

- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության միջոցով իրականացնել մոնիտորինգ, գնահատել Ծրագրի ընթացքը և նախապատրաստել Ծրագրի հաշվետվությունները, նպաստել ֆինանսական կառավարման համակարգի պահպանմանը, յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ օր հետո Բանկ ներկայացնել կիսամյակն ընդգրկող Ծրագրի՝ առողիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ Բանկի համար ընդունելի ձևով եւ բովանդակությամբ (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 2-րդ բաժին),

- Ծրագրի համար պահանջվող եւ վարկային միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները, աշխատանքները եւ ծառայությունները ձեռք բերել Գնումների ուղեցույցներում ամրագրված դրույթների համաձայն (Համաձայնագրի 2-րդ Առդիրի 3-րդ բաժին):

5. Համաձայնագրով ֆինանսավորվող Ծրագրի նպատակն է կենսական նշանակության ընտրված ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և հզորացնել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) կարողությունները՝ կենսական նշանակության ճանապարհային ցանցը կառավարելու համար:

Մասնավորապես, Ծրագրով նախատեսվում է բարելավել կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ 360 կմ երկարությամբ ընտրված ճանապարհներ, հիմնանորոգման և ընթացիկ պահպանման աշխատանքներ կատարել մոտ 23.4 կմ երկարությամբ ճանապարհային ցանցի ընտրված հատվածում եւ հիմնանորոգում՝ 23 կմ հատվածում, իրականացնել նախագծային ուսումնասիրություն, հսկողություն և անկախ տեխնիկական հաշվեքննություն, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումներ: Ծրագրի փակման ամսաթիվն է 2019թ. դեկտեմբերի 30-ը:

6. Անդրադառնալով վարկային համաձայնագրերով ծրագրերի հասցեականության հարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2014թ. դեկտեմբերի 16-ի ՄԴՈ-1186 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, որի համաձայն՝ այն ծրագրերը, որոնց համար վարկային միջոցներ են ներգրավվում, պետք է ունենան հասցեական բնույթ, քանի որ ծրագրերի հասցեականության բացակայությունը մեծացնում է նաև

վարկային ռեսուրսների օգտագործման ռիսկայնության աստիճանը:

Սույն գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչը գրավոր բացատրությանը կից ներկայացրել է քննության առարկա Համաձայնագրով ֆինանսավորվող Ծրագրի առաջին տարվա՝ 2016 թվականի ընթացքում վերականգնման ենթակա ճանապարհների ցանկ, որից երևում է, որ.

- Շիրակի մարզում Մարալիկ-Քարաբերդ-Զիթհանքով ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 10.0 կմ, որի նախնական արժեքը կազմելու է 1.75 մլն ԱՄՆ դոլար,

- Կոտայքի մարզում Հ1-Հրազդան-Հ55 ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 3.0 կմ, իսկ արժեքը՝ 0.53 մլն ԱՄՆ դոլար, Հ6-Նոր Գեղի-Արգել-Արգական-Հրազդան ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 13.0 կմ, արժեքը՝ 3.34 մլն ԱՄՆ դոլար,

- Սյունիքի մարզում Մ2-Սիսիան ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 4.6 կմ, իսկ վերականգնման նախնական արժեքը՝ 1.30 մլն ԱՄՆ դոլար, Մարտունի-Վաղաշեն-Վարդենիկ ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 11.0 կմ, արժեքը՝ 2.57 մլն ԱՄՆ դոլար, Երանոս-Ծակքար ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 4.7 կմ, արժեքը՝ 1.10 մլն ԱՄՆ դոլար,

- Գեղարքունիքի մարզում Միջպետական Մ11 Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման ճանապարհի վերականգնվող հատվածի երկարությունը կազմելու է 5.5 կմ, արժեքը՝ 1.26 մլն ԱՄՆ դոլար:

Ընդհանուր առմամբ աշխատանքները տարվելու են չորս մարզերում և ճանապարհների վերականգնվող հատվածների երկարությունը կազմելու է 51.8 կմ, իսկ վերականգնման նախնական արժեքը՝ 11.85 մլն ԱՄՆ դոլար:

Վարկի մնացած գումարի համար դեռևս ծրագրային հստակեցումներ առկա չեն:

7. Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ոլորտում նախկինում կնքված միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը հիշյալ ծրագրի իրականացման նպատակով կնքել է թվով չորս միջազգային վարկային համաձայնագիր, մասնավորապես.

- 2009 թվականի փետրվարի 26-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Կենսական նշանակության ավտոճանապարհների բարելավման ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիր, որով կենսական նշանակության

ճանապարհային ցանցի ընտրված հատվածների բարելավման և ճանապարհաշինության ոլորտում ժամանակավոր զբաղվածության ստեղծման նպատակով Միջազգային զարգացման ընկերակցությունը Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է տասնվեց միլիոն հարյուր հազար Հատուկ փոխառության իրավունքներին (16.100.000 ՀՓԻ) համարժեք գումարի չափով վարկ (ֆինանսավորում): Ըստ գործին կից՝ Էկոնոմիկայի նախարարի ներկայացրած տեղեկանքի՝ նախատեսվել է իրականացնել մոտ 100 կմ տեղական նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներ,

- 2009 թվականի սեպտեմբերի 4-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիր, որով կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածների բարելավման և ճանապարհաշինության ոլորտում ժամանակավոր զբաղվածություն ստեղծելու նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է երեսունվեց միլիոն վեց հարյուր հազար (36.600.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Այդ գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչը հայտնել է, որ նախատեսվել է վերականգնել 140 կմ կենսական նշանակության ճանապարհներ,

- 2010 թվականի հուլիսի 23-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև վարկային համաձայնագիր (Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում), որով կենսական նշանակության ավտոճանապարհների ցանցի ընտրված հատվածների բարելավման և ավտոճանապարհների կառուցման ոլորտում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծման նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է քառասուն միլիոն (40.000.000) դոլար գումարի չափով վարկ: Ըստ Ծրագրի՝ նախատեսվել է կենսական նշանակության ճանապարհների՝ մոտավորապես 190 կմ ընտրված հատվածների վերանորոգում,

- 2013 թվականի փետրվարի 11-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիր» փոխառության համաձայնագիր, որով ընտրված Կենսական նշանակության ճանապարհները բարելավելու միջոցով շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար բարելավման և Կենսական նշանակության ճանապարհային ցանցը

կառավարելու համար ՏԿՆ կարողության հզորացման նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է քառասունհինգ միլիոն (45.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով փոխառություն: Ըստ Ծրագրի՝ նախատեսվել է մոտ 147 կմ ընտրված ճանապարհների բարելավում և մոտ 23 կմ կենսական նշանակության ճանապարհների հիմնանորոգում և պահպանություն:

Նշված գործով կայացված որոշմամբ, գնահատելով իրավակիրառական պրակտիկան, սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ըստ ՀՀ վերահսկիչ պալատի համապատասխան հաշվետվության՝ վերը նշված նախորդ համաձայնագրերով հատկացված վարկային միջոցների ծախսման ընթացքում տեղ են գտել բազմաթիվ թերություններ ու բացթողումներ:

Ի պատասխան սահմանադրական դատարանի 2015թ. նոյեմբերի 24-ի ՍԴԱ-23 հարցման՝ ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչը հայտնել է, որ այդ ծրագրի 2013 թվականի ընթացքի նկատմամբ ՀՀ վերահսկիչ պալատի վերահսկողության արդյունքում նույնպես արձանագրվել են թերություններ: Մեկ պայմանագրի մասով (Մայակովսկի-Նոր Գյուղ-Կոտայք-Կապուտան-Զովաշեն ճանապարհահատվածի վերականգնման աշխատանքներ) արձանագրվել է թերություններ 3, 314 000 ՀՀ դրամի չափով, որը հետագայում կապալառուն վերականգնել և վերադարձրել է ՀՀ պետական բյուջե:

8. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը վերահաստատում է իր ՍԴՈ-1098 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ նմանաբնույթ վարկային համաձայնագրերի կատարման նկատմամբ հստակ ու թափանցիկ մշտադիտարկումը «...հիմք կհանդիսանա խուսափելու վարկային նախորդ համաձայնագրերի իրագործման պրակտիկայում տեղ գտած թերություններից եւ բացթողումներից, վարկային սուղ միջոցների անարդյունավետ օգտագործումից ու փոշիացումից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Մահմանադրության դրույթների հնարավոր խախտումներից»:

Մահմանադրական դատարանը վերահաստատում է նաև իր՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴՈ-1237 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումն առ այն, որ այս ոլորտում նույնպես «Հրատապ է... իրավասու պետական մարմինների կողմից վերոնշյալ վարկային համաձայնագրերով ներգրավված միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման համադրված վերլուծության ու գնահատման անհրաժեշտությունը», ինչը հիմք կհանդիսանա նոր վարկային միջոցների ներգրավման նպատակահարմարությունը հիմնավորելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2015 թվականի օգոստոսի 26-ին ստորագրված՝ «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1239



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՓՈՓՈԽՈՂ 15-ՐԴ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ա. Թաթոյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հունիսի 24-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան

փոփոխող 15-րդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014թ. նոյեմբերի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Գործը քննության է ընդունվել ՀՀ սահմանադրական դատարանի 24.11.2015թ. ՍԴԱՌ-68 որոշմամբ:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող 15-րդ արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն/ Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2013թ. հունիսի 24-ին:

Քննության առարկա Արձանագրության 7-րդ հոդվածի համաձայն այն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր Բարձր պայմանավորվող կողմերի կողմից Արձանագրությամբ պարտավորված լինելու մասին իրենց համաձայնությունը հայտնելու օրվան հաջորդող երեք ամիսը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Արձանագրությունը ներկա պահի դրությամբ ստորագրել է 41 պետություն, իսկ վավերացրել է 22-ը:

Արձանագրությամբ փոփոխվում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան: Փոփոխությունները նպատակաուղղված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արդյունավետության ամրապնդմանը:

Արձանագրությամբ նախատեսվում է նախաբանում ավելացնել նոր դրույթ՝ ամրագրելով սուբսիդիարության և պետության հայեցողության իրավունքի սկզբունքները:

Արձանագրությունը սահմանում է դատավորի թեկնածուների առավելագույն տարիք՝ 65 տարեկան, հնարավորություն ընձեռելով ընտրված դատավորին պաշտոնավարել լիարժեք 9 տարի, և դրանով պայմանավորված՝ հանվում է Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին:

Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձա-

նագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը, Պալատը կարող է, մինչև իր որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում: Արձանագրությամբ հանվում են «, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում» բառերը (Արձանագրության 3-րդ հոդված):

Արձանագրությամբ փոփոխվում է նաև Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը՝ սահմանելով, որ Դատարանը կարող է գործը քննության ընդունել ներպետական վերջնական որոշման կայացման օրվանից հետո՝ 4 ամսվա ընթացքում՝ գործող 6 ամսվա փոխարեն:

Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Դատարանն անընդունելի է համարում ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ դիմողը չի կրել էական վնաս, եթե Կոնվենցիայի և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պաշտպանությունը չի պահանջում գանգատի ըստ էության քննություն, և պայմանով, որ ոչ մի գանգատ այդ հիմքով չի կարող մերժվել, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատարանի կողմից:

Արձանագրությամբ նախատեսվում է հանել վերջին պայմանը և դրանով դատարանին իրավունք վերապահել «էական վնաս» կրած չլինելու հիմքով գանգատն անընդունելի համարել անկախ ներպետական ատյանում գործը քննված լինելու փաստից:

Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը, ըստ էության, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- սուբսիդիարության սկզբունքին համապատասխան կրում է 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) և դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքները և ազատություններն ապահովելու առաջնային պատասխանատվություն և այդ անելիս օգտվում է հայեցողության իրավունքից, որը ենթակա է Կոնվենցիայով հիմնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերահսկողությանը (հոդված 1),

- Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի թեկնածուներ առաջադրել այնպիսի անձանց, որոնց տարիքը չի գերազանցում 65 տարեկանը՝ այն օրվա դրությամբ, երբ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը Կոնվենցիայի 22-րդ հոդվածի համաձայն պահանջել է երեք թեկնածուների ցուցակը (հոդված 2, կետ 1),

- հրաժարվել Կոնվենցիայի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Պալատի կողմից հոգուտ Մեծ պալատի գործի ընդդատությունը զիջելու

առնչությամբ նախկինում սահմանված առարկություն ներկայացնելու իրավունքից (հոդված 3):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությունը հնարավորություն է տալիս բարձրացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության արդյունավետությունը և կարող է նպաստել անձի իրավունքների և ազատությունների միջազգային իրավական պաշտպանությանը, ինչը համահունչ է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2013 թվականի հունիսի 24-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող 15-րդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1240



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 թվականի նոյեմբերի 4-ին երեվանում՝ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի նոյեմբերի 4-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության

և Եվրասիական զարգացման բանկի միջև Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2015 թվականի նոյեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր և բանավոր բացատրությունները, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի նոյեմբերի 4-ին:

2. Համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում Հավելված թիվ 1-ը՝ «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմաններ», Հավելված թիվ 2-ը՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի ստացման հայտ», Հավելված թիվ 3-ը՝ «Ֆինանսական վարկի պայմանները» և Հավելված թիվ 4-ը՝ «Հիմնական պարտքի մարման ժամանակացույց»:

3. Եվրասիական զարգացման բանկը (այսուհետ՝ Կառավարիչ) նախատեսում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 300.000.000 (երեք հարյուր միլիոն) ԱՄՆ դոլարի չափով բյուջետային աջակցության վարկ:

Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտը 2018 թվականի մարտի 31-ն է կամ ավելի ուշ ժամկետ, որը Կառավարիչը կարող է հաստատել ՀՀ դիմումի հիման վրա: Վարկը կտրամադրվի երեք մասնաբաժիններով՝ յուրաքանչյուրը 100.000.000 (հարյուր միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով: Վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է 2,1%, այն տրամադրվում է 20 տարի մարման ժամկետով, որից 10 տարին արտոնյալ ժամանակահատվածն է:

Յուրաքանչյուր մասնաբաժնի տրամադրման համար նախապայման է հանդիսանում ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված բարեփոխումների կոնկրետ պայմաններ նախատեսող ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը:

4. Ծրագրում ներկայացված տնտեսական, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության միջոցառումներն ուղղված են հիմնական կարճաժամկետ և միջնաժամկետ ռիսկերի չեզոքացմանը, ինչպես նաև տնտեսական աճի ավելի բարձր տեմպերի ապահովման գործում խոչընդոտների վերացմանը: Ծրագրի գլխավոր ուղղություններն են.

- ա) էներգետիկ հատվածի ֆինանսական կայունության բարձրացումը,
- բ) պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացումը,
- գ) փոխարկման կուրսի ճկունության, դոլարիզացիայի կրճատման և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության բարձրացումը:

5. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

– Ֆինանսական վարկն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացել և վարել առանձին հաշիվ՝ վարկի արժույթով,

– Ֆինանսական վարկի միջոցներն օգտագործել Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար (Համաձայնագրի նպատակներով Ընդունելի ծախսեր են հանդիսանում Ֆինանսական վարկի միջոցների օգտագործումը պետական բյուջեի այն ծախսերի ֆինանսավորման համար, որոնք «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված են համապատասխան տարվա համար),

– կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին՝ նշված ամսաթվերից առաջինից սկսած, որը հաջորդում է Ֆինանսական վարկի առաջին տրանշը Կառավարչի կողմից Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու ամսաթվին, և Ֆինանսական վարկի գծով առկա Հիմնական պարտքի վերջնական վճարման ամսաթվով ավարտած, վճարել դուրսբերված և չմարված գումարին հավելագրվող տոկոսները՝ տարեկան 2.1% (երկու ամբողջ մեկ տասնորդական տոկոս) չափով,

– սկսած 2025 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2035 թվականի մայիսի 15-ը, ներառյալ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, 15.000.000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար մասնաբաժնով մարել Ֆինանսական վարկի հիմնական պարտքը,

- Ծրագիրը կատարել անհրաժեշտ բարեխղճությամբ և արդյունավետությամբ՝ վարչական, տեխնիկական, ֆինանսական, էկոլոգիական և սոցիալական նորմերին ու գործելակերպին համապատասխան,
- ապահովել Ծրագրի մոնիտորինգը և գնահատումը, ներկայացնել հաշվետվություններ՝ Ծրագրի միջոցառումների կատարման և դրա իրագործման ընթացքի գնահատման պլանավորված ցուցանիշների ապահովման մասին,
- հիմնական պարտքի և(կամ) տոկոսների վճարման գծով պարտավորությունների կատարման կետանցի դեպքում վճարել տուժանք՝ ուշացված յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց պարտավորության ամբողջ գումարի 0,01% չափով,
- ապահովել աուդիտորական ստուգման անցկացումն իր հաշվին՝ Կառավարչի հավանությանն արժանացած անկախ աուդիտորի ներգրավմամբ,
- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքն ակտիվների հատկացման, իրացման կամ բաշխման մասով առաջնահերթություն չունենա Հիմնադրամի միջոցների հաշվին ստացած Ֆինանսական վարկերի գծով առկա պարտքի նկատմամբ,
- ամբողջությամբ փոխհատուցել Կառավարչին Հիմնական պարտքը վերադարձնելու և վարձահատուցելու հետ կապված ցանկացած չնախատեսված ծախսերը և կոմիսիոն վճարները, որոնք կարող են առաջանալ Ֆինանսական վարկի միջոցները Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասով, ինչպես նաև ապահովել, որպեսզի Կառավարչի միջոցներն ու գույքը, այդ թվում՝ նաև Ֆինանսական վարկի գումարը, Հայաստանի Հանրապետության տարածքում զերծ լինեն ամեն տեսակի սահմանափակումներից, կարգադրագրերից և մորատորիումներից:

6. Սույն Համաձայնագրով ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի նոյեմբերի 4-ին Երևանում ստորագրված՝

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1241



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԳՐՈԴՆՈՑՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԲՆԱԿԱՆ ՍՈՐԹՈՒՑ ՀԱԳՈՒՍՏԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏԻ
ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ
ԴԻՐՔՈՎ ՀՄԿԻԶ (ՆՈՒՑՆԱՑՄԱՆ) ՆՇԱՆՆԵՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ 2015-2016
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

1 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-
յանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրա-
պետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի
Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Ալավերդյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-
րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմա-
նադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
25, 38 և 72-րդ հոդվածների,

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի սեպտեմբերի 8-ին Գրողնոյում ստորագրված՝ «Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքով հսկիչ (նույնացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2015 թվականի նոյեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքով հսկիչ (նույնացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի սեպտեմբերի 8-ին՝ Գրողնոյում:

Համաձայնագրով սահմանվում է «Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքով ապրանքների դրոշմավորման ներդրմանն ուղղված փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելիս հսկիչ (նույնացման) նշաններով այն ապրանքների դրոշմավորման ներդրման կարգը, որոնց վերաբերյալ կայացվել է հսկիչ նշաններով դրոշմավորման մասին որոշում:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը հաստատում է հսկիչ նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը (Ցանկ):

Հսկիչ նշաններով դրոշմավորվում են Ցանկում ներառված այն ապրանքները, որոնք ներմուծվում են (ներմուծվել են) Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, և (կամ) որոնք արտադրված են անդամ պետությունների տարածքում՝ բացառությամբ Համաձայնագրով նախատեսված դեպքերի: Թույլատրվում է Ցանկում ներառված ապրանքների դրոշմավորումը հսկիչ նշաններով՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքի սահմաններից դուրս:

Ցանկը հաստատելու և (կամ) փոփոխելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած արգելվում է Ցանկում ներառված ապրանքների ձեռքբերումը, պահպանումը, օգտագործումը, փոխադրումը և վաճառք՝ անդամ պետությունների տարածքներում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ առանց հսկիչ նշանների կամ սահմանված կարգի խախտումներով դրանց վրա գետեղված հսկիչ նշաններով՝ բացառությամբ Համաձայնագրով նախատեսված դեպքերի:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) անդամ պետությունների՝ վերահսկողության և իրավապահ այլ մարմինների հետ միասին ապահովել Ցանկում ներառված ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողությունը.

բ) Ցանկում ներառված ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ նախատեսել պատասխանատվություն Համաձայնագրով սահմանված պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

գ) Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային տեղեկացնել իր իրավասու (լիազորված) մարմնի մասին.

դ) Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2016 թվականի ապրիլի 1-ը՝

- որոշել հսկիչ նշանների իրացման և հաշվառման կարգը,
- ապահովել ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի աշխատանքը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատված պահանջներին համապատասխան,
- ձևավորել այն կազմակերպությունների գրանցամատյանները, որոնք կիրականացնեն հսկիչ նշանների պատրաստումը և իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին դրանց իրացումը,
- սահմանել այն մասնագիտացված պահեստային շինություններին ներկայացվող պահանջները, որտեղ Ցանկում ներառված ապրանքների ներմուծումն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին թույլատրվում է հսկիչ նշաններով ապրանքների դրոշմավորումը ներքին սպառման համար դրանց բացթողումից հետո, ինչպես նաև վերաներմուծումից հետո և (կամ) սահմանել այդ պահեստային շինությունների ցանկը:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ և 9-րդ հոդվածների դրույթներին և ուղղված են Եվրասիական տնտե-

սական միության անդամ պետությունների միջև ապրանքների օրինական շրջանառությունն ապահովելուն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի սեպտեմբերի 8-ին Գրողնոյում ստորագրված՝ «Բնական մորթուց հագուստի առարկաներ, հագուստի պարագաներ և այլ արտադրատեսակներ» ապրանքային դիրքով հսկիչ (նույնացման) նշաններով ապրանքների դրոշմավորում ներդնելու փորձնական ծրագիրը 2015-2016 թվականներին իրականացնելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1242



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 թվականի մայիսի 14-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

4 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա.
Գյուլումյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ.
Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրա-
պետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Մահմանադրության 100-
րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Մահ-
մանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի

մայիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի գործունեության պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 09.11.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի գործունեության պայմանների մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի մայիսի 14-ին՝ Երևանում:

2. Համաձայնագրի նպատակն է երկու պետությունների ժողովուրդների կրթության և մշակույթի զարգացման գործում հետագա փոխգործակցության համար առավել բարենպաստ պայմանների ստեղծումը:

3. Համաձայնագրի 20-րդ հոդվածի համաձայն՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում 1997թ. օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության և 2-ից 13-րդ հոդվածների գործողությունը, փոփոխված և լրացված՝ 2003 թվականի ապրիլի 23-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 1997թ. օգոստոսի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համաձայնագրով:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը մասնավորապես ստանձնում է հետևյալ պարտավորությունները, որոնք են.

- մշտական /անժամկետ/ օգտագործման իրավունքով Համալսարանին տրամադրել գործունեության իրականացման համար անհրաժեշտ

հողամասերը՝ որպես Հայկական կողմի ներդրում (հոդված 6),

- աջակցել Համալսարանի նյութատեխնիկական բազայի զարգացմանը, որն անհրաժեշտ է Համալսարանի՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածում նշված հիմնական խնդիրների իրականացման համար (հոդված 6),

- լիազոր մարմինը /ՀՀ ԿԳՆ/ պարտավոր է ամեն տարի սահմանել ընթացիկ ֆինանսական տարվա և պլանային ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության բյուջեից Համալսարանին հատկացվող սուբսիդիաների ծավալները (հոդված 7, պարբերություն 1),

- նպաստել Համալսարանի և Կողմ պետությունների ու այլ երկրների կրթական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացմանը, Համալսարանի ուսումնառուների, մանկավարժական, գիտական և այլ աշխատակիցների միջազգային ակադեմիական շարժունակությանը, այլ երկրների քաղաքացիների ներգրավմանը Համալսարանում ուսումնառելուն (հոդված 8, պարբերություն 2),

- Համալսարանի նյութատեխնիկական, ֆինանսական և ուսումնամեթոդական գործունեության ապահովման հարցերի լուծման համար ձևավորել հայ-ռուսական համատեղ մշտական աշխատանքային խումբ (հոդված 9),

- փոխադարձաբար ճանաչել Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների և գիտական աշխատողների գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի գիտական աստիճանները, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումները՝ նպատակ ունենալով պահպանել նրանց իրավունքները Համալսարանի հետ հարաբերությունների շրջանակում, կողմերի օրենսդրության համաձայն նմանատիպ աշխատակիցների՝ Համալսարանի հետ աշխատանքային հարաբերությունների ձևակերպման պարագայում (հոդված 15),

- ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ Համալսարանի տարածքում իրավակարգի պահպանման ուղղությամբ (հոդված 16):

Ինչպես իր՝ 01.12.2015թ. 01/05.1/14382-15 գրությամբ նշում է ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչը՝ 1997թ. օգոստոսի 29-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին» համաձայնագրի վավերացման ժամանակ գործում էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 06.06.1992 թվականին ընդունված՝ «ՀՀ միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման և չեղյալ հայտարարման մասին» ՀՕ-30 ՀՀ օրենքը, որի 9-րդ հոդվածը սահմանում է՝ «Վավերացման ենթակա են՝ համագործակցության և փոխօգնության ..., որոնք պարտավորություններ են դնում պետության ֆինանսների վրա ...», ինչը ենթադրում է, որ սույն Համաձայնագիրը նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն պետք է ներկա-

յացվեր ՀՀ Գերագույն խորհրդի վավերացմանը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը կնպաստի Համալսարանում սովորողների կրթական, գիտական և արտադրական պրակտիկայի, Համալսարանում գիտամանկավարժական աշխատողների վերապատրաստման ու որակավորման բարձրացման կազմակերպմանն առաջատար ուսումնական կենտրոններում, ինչպես նաև ժողովուրդների լեզվի, մշակույթի, պատմական և ազգային ավանդույթների պահպանմանը, որը համահունչ է ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ի**.

1. 2015 թվականի մայիսի 14-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի գործունեության պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 դեկտեմբերի 2015 թվականի
ՄԴՈ-1243



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ, 8-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ
«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-
յանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ.
Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրա-
վական վերլուծության վարչության պետ Լ. Սարգսյանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժո-
ղովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատա-
կազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի
գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության

100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասության, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասության և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 06.07.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Նույնականացման քարտերի մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 30-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունը սահմանում է.

«Անձնական տվյալների տեղեկատվական բազաներում անձի նույնականացումն ապահովելու նպատակով նույնականացման քարտ ստանալիս քաղաքացին ուստիկանության մարմնում հանձնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները»:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը սահմանում է.

«Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը և օրենքով նախատեսված դեպքերում 2014 թվականի հունվարի 1-ից հետո տրված Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի վավերականության ժամկետը լրանալու դեպքում քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագիր չի տրամադրվում (փոխանակվում), բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Հիշյալ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասության մեջ ՀՀ Ազգային ժողովի կողմից որևէ փոփոխություն կամ լրացում չի

կատարվել: Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությունը վիճարկվող խմբագրությամբ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-136-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 11-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 1-ից:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի սեպտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հոկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2002 թվականի հոկտեմբերի 31-ից:

Հիշյալ օրենքի սույն գործով վիճարկվող 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է.

«1. Ռեգիստրում մշակվում են բնակչի հետևյալ անհատական տվյալները.

...

10) կենսաչափական տվյալները, եթե դրանց մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով»:

Հիշյալ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը վիճարկվող խմբագրությամբ օրենքում ամրագրվել է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-290-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 30-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 1-ից:

2. Դիմողը գտնում է, որ «Նույնականացման քարտերի մասին» և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքների իր կողմից վիճարկվող դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մասին, 26-րդ հոդվածին, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 37-րդ, 43-րդ և 48-րդ հոդվածներին, ներկայացնելով հետևյալ փաստարկները.

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների առնչությամբ՝ այն քաղաքացիները, որոնք կրոնական համոզմունքներից ելնելով հրաժարվել են օրենքով սահմանված կարգով նույնականացման քարտեր ստանալուց, զրկվել են կենսաթոշակ ստանալու իրավունքից: Խնդիրն այն է, որ «նույնականացման քարտերի որոշ բաղկացուցիչ հատկանիշներ և մասեր (օրինակ՝ քարտի էլեկտրոնային բնույթը և էլեկտրոնային պահոցի առկայությունը) հակասում են տվյալ քաղաքա-

ցիների կրոնական համոզմունքներին, ուստի վերջիններս ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի վավերականության ժամկետը լրանալուց հետո հրաժարվել են նույնականացման քարտեր ստանալուց: Արդյունքում՝ նրանք չեն կարողանում իրականացնել ՀՀ Սահմանադրության 37-րդ, 8-րդ, 31-րդ և 48-րդ հոդվածներով երաշխավորված սոցիալական ապահովության և սեփականության իրավունքները»: Ըստ դիմող կողմի՝ օրենքի ներկայիս կարգավորումներով սահմանված չէ անձնագրերի տրամադրում այն դեպքերում, երբ կրոնական համոզմունքներից ելնելով՝ քաղաքացին հրաժարվել է ձեռք բերել նույնականացման քարտ: Եվ, ինչպես գտնում է դիմող կողմը՝ «օրենքը որոշ խմբի անձանց դնում է երկրնտրանքի առաջ. կամ իրականացնել իրենց խղճի և կրոնի ազատության իրավունքը, կամ, հրաժարվելով այդ իրավունքից, ստանալ նույնականացման քարտ՝ իրենց սոցիալական ապահովության իրավունքից արդյունավետ օգտվելու համար»: Հետևաբար, ինչպես եզրակացնում է դիմող կողմը, կրոնի ազատության, սոցիալական ապահովության և սեփականության իրավունքների սահմանափակումը համաչափ չէ անձնագրային նոր համակարգ ներդնելու միջոցով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակներին և «համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 8-րդ, 26-րդ հոդվածների, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 37-րդ և 48-րդ հոդվածների պահանջներին»:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների առնչությամբ դիմող կողմը գտնում է, որ՝ «... նախատեսված անհատական տվյալների տեղեկատվական բազայի առկայությամբ անձի անձնական կյանքի հարգանքի իրավունքի հնարավոր սահմանափակումն իր մեջ պարունակում է այս իրավունքի ռոնահարման ռիսկեր, քանզի պետությունը չի կարող լիարժեքորեն երաշխավորել տեղեկատվական բազայի անվտանգության հարցը ... ներկայումս գոյություն ունեցող ամենաապահով տվյալների բազաները նույնիսկ ամբողջովին ապահովագրված չեն հնարավոր կիբեր-հարձակումներից ապօրինի ներխուժման և այդ բազայում առկա տեղեկատվությանը ապօրինի տիրանալու ռիսկերից»: Դիմող կողմը նաև գտնում է, որ եթե նույնիսկ վարչարարական ընթացակարգերի պարզեցմանն ու կրճատմանն ուղղված քաղաքականության իրականացումը, ինչպես նաև փաստաթղթի կեղծման հնարավորությունը նվազագույնի հասցնելը և ազգային անվտանգության ապահովումը դիտարկվեն որպես օրինական նպատակ, ապա աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները պահպանող անձնագրային համակարգի տեղեկատվական բազայի ստեղծումը հանգեցնում է Սահմանադրության 23-րդ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված-

ներով երաշխավորված իրավունքի այնպիսի սահմանափակման, որը համաչափ չէ հետապնդվող նպատակին: Այդպիսով, դիմող կողմը եզրակացնում է, որ վիճարկվող դրույթներն այնքանով, որքանով նախատեսում են անհատական տվյալների այնպիսի տեղեկատվական բազաների առկայություն, որոնք պարունակում են անձանց մատնադրոշմների կամ այլ կենսաչափական տվյալներ, համահունչ չեն ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մասի և 43-րդ հոդվածի պահանջներին:

Որպես վերոհիշյալ փաստարկների հիմնավորումներ դիմող կողմը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ՄԻԵԴ նախադեպային որոշումներ, եվրոպական պետությունների իրավակիրառական պրակտիկան:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում նույնականացման քարտերի ներդրումն անձանց կրոնական իրավունքներին ուղղակիորեն չի առնչվում: Նույնականացման քարտը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ: Այն նախատեսված է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Ըստ պատասխանող կողմի՝ չեն բացառվում այնպիսի իրավիճակները, որ հին նմուշի անձնագրերը ևս իրենց առանձին տարրերի պատճառով «հասարակության որոշ հատվածի կողմից դիտվեն որպես իրենց կրոնական համոզմունքներին հակասող: Սակայն դա չի նշանակում, որ նման անձնագրերի կիրառությունն նախատեսող իրավական նորմերը հակասահմանադրական են»: Եվ, ինչպես փաստում է պատասխանողը, քաղաքացիների իրավունքների ամբողջական իրացումն ապահովելու նպատակով օրենսդիրն առանձին վերապահում է կատարել հանրային ծառայությունների համարանիշի մասով և «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսել է նույնականացման քարտի տրամադրում առանց հանրային ծառայությունների համարանիշը նույնականացման քարտում ամրագրելու՝ այն դեպքերում, երբ քաղաքացին հրաժարվել է ձեռք բերել այդպիսի համարանիշ կամ սոցիալական քարտ:

Պատասխանողը միաժամանակ փաստում է. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձնական տվյալները հատուկ իրավական ռեժիմով պաշտպանության ենթակա օբյեկտներ են, ինչը պայմանավորված է անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքերի տարածվածությամբ և հիշյալ բնագավառում մարդու անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի պաշտպանության անհրաժեշտությամբ՝ 2015թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Անձնական տվյալների պաշտպա-

նության մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի ընդունմամբ անձնական տվյալների մշակման ու պաշտպանության կարգավորման ներպետական մեխանիզմները համապատասխանեցվեցին եվրոպական ստանդարտներին, մասնավորապես՝ Եվրամիության 1981 թվականի հունվարի 28-ի «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի և Եվրապաշումենտի ու Եվրախորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի ԵՄ-95-46 «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի դրույթների պահանջներին»:

Միաժամանակ, պատասխանող կողմը գտնում է, որ «հասարակական կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավունքների անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, երբ այդպիսի իրավունքների իրականացումը պայմանավորված է անձը հաստատող փաստաթղթերի պարտադիր առկայությամբ, պետք է նախատեսվեն համապատասխան իրավական միջոցներ, որոնք ընդունելի կլինեն կրոնական համոզմունքների տեսանկյունից և անձանց չեն կանգնեցնի կրոնական համոզմունքների և հիմնական իրավունքների իրականացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև»:

4. Սույն գործի քննության շրջանակներում, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը որոշելիս նախ գնահատել.

- վեճի առարկա իրավակարգավորումներում «իրավունքների» ու «պարտականությունների» **փոխադարձության ու համարժեքության** ապահովումը՝ որպես վիճարկվող նորմերի կիրառման շրջանակներում առաջացող հարաբերությունների արդյունավետ կարգավորման երաշխիք,

- վիճարկվող նորմատիվ կարգավորմամբ պայմանավորված իրավական հետևանքների հնարավոր ազդեցությունը սահմանադրական այլ իրավունքների ազատ իրացման վրա,

- քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի և դրան հասնելու իրավական միջոցների համաչափությունը՝ պարզելու համար, թե որքանո՞վ է այն համահունչ խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացման և այդ ազատության սահմանափակման պետության հայեցողության՝ Մահմանադրությամբ կանխորոշված չափանիշներին,

- վիճարկվող իրավակարգավորման և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրելիությունը (այդ թվում կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացման շրջանակներում)՝ պարզելու համար նաև այդ իրավակարգավոր-

մամբ անձի հիմնական իրավունքների ու ազատությունների հնարավոր սահմանափակումների համապատասխանությունը միջազգային իրավական չափանիշներին:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատել նաև իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների, անձնական տվյալների պաշտպանությունն ապահովող սահմանադրական և օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացումն ապահովող օրենսդրության այլ ակտերի համապատասխան դրույթների համատեքստում:

5. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության քաղաքացուն՝ իր ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթղթի տրամադրման հետ կապված հարաբերություններն է, որոնք օբյեկտիվորեն, ՀՀ Սահմանադրության և քաղաքացիության ինստիտուտը կարգավորող օրենսդրության այլ ակտերի հիմքով ծագում են, մի կողմից, պետության, մյուս կողմից՝ ֆիզիկական անձի միջև, հաստատագրելով Հայաստանի Հանրապետության և քաղաքացու միջև իրավաբանական կապը, որը հիմք է հասարակական կյանքում փոխադարձ իրավունքների և պարտականությունների ստանձնման ու կատարման համար: Այդպիսի փաստաթուղթը, ըստ հիշյալ օրենքի 2-րդ հոդվածի, նույնականացման քարտն է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար: Այսինքն, ըստ իր իրավական բովանդակության՝ նույնականացման քարտը նախ և առաջ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատող և պետության կողմից տրվող պաշտոնական փաստաթուղթ է, առանց որի քաղաքացին անկարող է իրավահարաբերությունների լիարժեք (գործունակ) սուբյեկտ լինել, իրացնել Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքները և կատարել (ստանձնել) պարտականություններ:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան անհատական հաշվառման (գրանցման) հետ կապված հարաբերություններն են, որոնց իրավակարգավորման նպատակը ՀՀ բնակչի ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի (25-րդ հոդվածի առաջին մաս) իրացումն ապահովելն ու ըստ բնակության վայրի սահմանված անհատական հաշվառման տվյալների տեղեկատվական համակարգի (ռեգիստրի) ստեղծումն ու վարելն է:

Այդպիսով, ինչպես «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի,

այնպես էլ սույն գործով քննության առարկա «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների **ընդհանուր տրամաբանությունից բխում է**, որ ինչպես պետությունը, այնպես էլ անհատը, իրացնելով այդ օրենքներով նախատեսված համապատասխան իրավունքներ ու պարտականություններ՝ ձեռք են բերում հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ծագող հարաբերությունների մասնակից (սուբյեկտ) լինելու իրավական հնարավորություններ, որպիսիք անհրաժեշտ են նախ և առաջ՝ ժողովրդավարական, իրավական պետության պայմաններում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունն ապահովելու, պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներն արդյունավետ լուծելու համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի նպատակն արդարացի է և իրավաչափ, բխում է իրավունքի գերակայության սկզբունքից: Վերջինս ենթադրում է նաև անհատի և պետության **փոխադարձ իրավունքներին համարժեք պարտականությունների բաշխման և հավասարակշռման** սկզբունքի պահպանում, որը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունից:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի սույն գործով վիճարկվող և դրանց կարգավորման առարկային վերաբերող օրենքի այլ նորմերի **ընդհանուր վերլուծությունը՝** կապված նույնականացման քարտ տրամադրելու առնչությամբ ծագող հարաբերությունների կարգավորման հետ, վկայում է, որ.

- քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրվում կամ այդ քարտը փոխանակվում է **կամավորության սկզբունքով**, իր դիմումի համաձայն (3-րդ հոդված),

- նույնականացման քարտ տրամադրվում է նաև ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ նախատեսված նմուշի ՀՀ քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը լրանալու դեպքում (8-րդ հոդված),

- քարտում ամրագրվում են քաղաքացու անձնական տվյալները, այդ թվում քարտի տեխնիկական մասում՝ էլեկտրոնային պահոցում (4-րդ հոդված),

- նույնականացման քարտ տրամադրվում է **այն դեպքում**, երբ քաղաքացին ոստիկանության մարմնում հանձնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների կամ՝ աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները (4-րդ հոդվածի 8-րդ մաս),

- նույնականացման քարտում ամրագրվում են նաև հանրային ծառայությունների համարանիշը՝ եթե քաղաքացին չի հրաժարվել ձեռք բերել սոցիալական ապահովության քարտ, **ինչպես նաև քաղաքացու լուսանկարը, ստորագրությունը, արյան խումբը և ռեզուսը՝** քաղաքացու կամ

օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացուցչի համաձայնությամբ:

Այսպիսով, հիշյալ օրենքի համապատասխան նորմերի բովանդակությունից հետևում է, որ նույնականացման քարտ ստանալը **քաղաքացու իրավունքն է**, որի իրացումը պայմանավորված է ինչպես քաղաքացու կամաարտահայտությամբ, այնպես էլ նրա կողմից որոշակի **պարտականությունների կատարմամբ:**

«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի ինչպես վիճարկվող, այնպես էլ այլ նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ.

- ռեգիստրում մշակվում են բնակչի որոշակի անհատական տվյալներ, այդ թվում՝ կենսաչափական տվյալներ պարունակող, **եթե դրանց մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով** (5-րդ հոդված),

- ՀՀ բնակիչը պարտավոր է սահմանված կարգով ու ժամկետներում համապատասխան ռեգիստրին (անձամբ կամ ՀՀ արտաքին գործերի նախարարության, դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով) ներկայացնել իր բնակության վայրի (կացարանի) հասցեն և սահմանված անհատական տվյալներ, **այդ թվում՝ կենսաչափական** (7-րդ հոդված),

- օրենքի պահանջները խախտելու դեպքում **նախատեսվում է պատասխանատվություն** (10-րդ հոդված):

Այսինքն, հիշյալ օրենքով երաշխավորելով ՀՀ տարածքում ազատ տեղաշարժի **իրավունքի իրացումը**՝ միաժամանակ օրենքով բնակչի առջև դրվում են **կատարման համար պարտադիր պահանջներ**, որոնց իրավական նպատակահարմարությունը պայմանավորված է պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վեճի առարկա դրույթի սահմանադրականության հարցը էապես պայմանավորված է պատասխանողի կողմից մատնանշված՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի /ուժի մեջ է մտել 2015թ. հուլիսի 1-ից/ իրավակարգավորումների բնույթով, ինչը, սակայն, սահմանադրական դատարանում դիմողի կողմից չի վիճարկվել և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով սույն գործի շրջանակներում քննության առարկա լինել չի կարող: Ընդ որում, այդ օրենքով են սահմանվում կենսաչափական տվյալների մշակման առանձնահատկությունները, որոնց համաձայն՝ **կենսաչափական անձնական տվյալներ մշակվում են միայն տվյալների սուբյեկտի համաձայնությամբ**, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, և եթե օրենքով հետապնդվող նպատակը հնարավոր է իրականացնել միայն այդ կենսաչափական տվյալները մշակելու միջոցով:

Նման բացառություն նախատեսված է «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, որը կենսաչափական տվյալներից առանձնացնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները: **Մնացած բոլոր կենսաչափական տվյալները կարող են մշակվել բացառապես կամավորության սկզբունքով՝ տվյալ սուբյեկտի համաձայնությամբ:**

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կենսաչափական տվյալների մշակման և պահպանության հարցերը սույն գործով քննության առարկա կարող են հանդիսանալ միայն դիմումի առարկայի շրջանակներում՝ պայմանավորված մատնադրոշմներ վերցնելու և պահպանելու հանգամանքով:

6. Անհատական, այդ թվում՝ կենսաչափական, տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրությունը վկայում է որոշակի հստակ չափորոշիչների կիրառման անհրաժեշտության մասին, մասնավորապես.

- այդ տվյալները պետք է հավաքվեն և մշակվեն արդար և օրինական ճանապարհով,

- պահպանվեն հատուկ և իրավաչափ նպատակների համար և չօգտագործվեն այդ նպատակներին չհամապատասխանող ձևով,

- լինեն համարժեք, համապատասխան և համաչափ հավաքման համար հիմք ծառայած նպատակներին,

- լինեն ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում թարմացվեն,

- պահպանվեն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտին այնպիսի ժամանակահատվածում, որը չի գերազանցում տվյալների հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար պահանջված ժամանակահատվածը,

- անվտանգության համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկվեն ավտոմատացված տվյալների բազաներում պահպանվող անհատական տվյալների պաշտպանության համար՝ ընդդեմ պատահական կամ չթույլատրված ոչնչացման կամ կորստի, ինչպես նաև չթույլատրված մուտքի, փոփոխության կամ տարածման (Եվրոպայի խորհուրդ, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիա, 1981, վավերացվել է 09.05.2012թ.):

Կենսաչափական տվյալների հավաքման, մշակման և օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1797 (2011) բանաձևի շրջանակներում անդամ պետություններին կոչ է արվում.

- ընդունել հատուկ օրենսդրություն կենսաչափական տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ՝ պաշտպանելու անհատներին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ու մարդու իրավունքների պաշտպանության այլ փաստաթղթերով սահմանված իրավունքների խախտումներից, մասնավորապես.

ա) ապահովել համաչափություն կենսաչափական տվյալների հետ գործողություններ կատարելիս,

բ) սահմանափակել դրանց գնահատումը, մշակումը և պահպանումը միայն հստակ անհրաժեշտության դեպքերի համար, մասնավորապես, երբ հանրային անվտանգության կամ հանրային առողջության պահպանման կամ այլոց իրավունքների պաշտպանության շահը գերակայում է մարդու իրավունքներին հնարավոր միջամտության նկատմամբ և եթե այլ, ավելի նվազ միջամտություն հանդիսացող միջոցի օգտագործումն անհնար է,

գ) ապահովել համապատասխան պահպանման համակարգեր՝ մասնավորապես նվազագույնի հասցնելով կենտրոնացված համակարգերում տվյալների պահպանումը, ինչպես նաև խուսափել պահպանման համակարգերում անվերաբերելի տվյալներ պահպանելու չարաշահումներից,

դ) ապահովել, որպեսզի կենսաչափական տվյալներն օգտագործվեն միայն դրանց իրավաչափ հավաքման համար հիմք հանդիսացած նպատակի համար՝ կանխելով այդպիսի տվյալների չթույլատրված փոխանցումն ու հասանելիությունը:

Անհատական տվյալների մշակման հետ կապված անհատների պաշտպանության և այդ տվյալների ազատ տարածման մասին Եվրոպական միության շրջանակներում ընդունված 95/46/EC դիրեկտիվի համաձայն (24 հոկտեմբերի 1995թ.) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ անհատական տվյալները մշակվեն միայն այն դեպքում, երբ այն անհրաժեշտ է հանրային շահերից կամ վերահսկող մարմնի պաշտոնական լիազորության իրականացումից բխող խնդրի իրականացման համար:

Մասնավոր կյանքի պաշտպանության և անհատական տվյալների միջսահմանային փոխանցման վերաբերյալ ուղեցույցում սահմանված՝ «ազգային կիրառման հիմնարար սկզբունքների» համաձայն (ընդունված՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության շրջանակներում) նախատեսված են հետևյալ չափորոշիչները.

ա) հավաքման սահմանափակման սկզբունք.

- անհատական տվյալների հավաքման հետ կապված պետք է լինեն սահմանափակումներ, և այս տվյալները պետք է ստացվեն միայն իրավական ու արդար միջոցներով, անհրաժեշտության դեպքում՝ տվյալների

սուբյեկտի իմացությամբ և համաձայնությամբ.

բ) տվյալների որակի սկզբունք.

- անհատական տվյալները պետք է համարժեք լինեն դրանց հավաքման համար հիմք հանդիսացած նպատակներին և դրանց հասնելու համար անհրաժեշտ ծավալ ունենան, պետք է լինեն հավաստի, ամբողջական և թարմացվեն.

գ) նպատակի հստակեցման սկզբունք.

- անհատական տվյալների համար հիմք հանդիսացած նպատակները պետք է հստակեցվեն դրանց հավաքման ժամանակ և դրանց հետագա օգտագործումը պետք է ուղղված լինի միայն այդ նպատակների իրականացմանը:

Եվրոպական միության անդամ պետությունների կողմից տրվող անձնագրերում և ճանապարհորդական փաստաթղթերում կենսաչափական տվյալների անվտանգության հատկանիշների ու չափանիշների վերաբերյալ հանձնարարականի համաձայն.

- անդամ պետությունների կողմից տրված անձնագրերը և ճանապարհորդական փաստաթղթերը պետք է համապատասխանեն սահմանված անվտանգության նվազագույն չափանիշներին,

- անձնագրերը և ճանապարհորդական փաստաթղթերը պետք է ներդրվի կրիչ, որը ներառում է դեմքի լուսանկարը: Անդամ պետությունները պետք է նաև ներառեն մատնահետքերը փոխլրացնող ձևաչափեր: Տվյալները պետք է ապահով լինեն, և տվյալներ պահպանող կրիչը պետք է ունենա համապատասխան հնարավորություն տվյալների գաղտնիությունն ու նույնականությունը երաշխավորելու համար,

- կարգավորման նպատակների համար անձնագրերի և ճանապարհորդական փաստաթղթերի կենսաչափական տվյալները պետք է միայն օգտագործվեն հաստատելու համար՝

ա) փաստաթղթի նույնականությունը,

բ) փաստաթուղթն ունեցող անձի ինքնությունը՝ ուղղակիորեն առկա համադրելի հատկանիշների միջոցով, երբ օրենքը պահանջում է տրամադրել անձնագիր կամ այլ ճանապարհորդական փաստաթուղթ (Եվրոպական միության շրջանակներում 2004թ. դեկտեմբերի 13-ին ընդունված կարգավորում 2252/2004):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), ինչպես նաև Եվրոպական միության արդարադատության դատարանն անդրադառնալով Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման և եվրոպական իրավունքի նորմերի պահանջների տեսանկյունից կենսաչափական տվյալների բնույթի ու դրանց իրավական պաշտպանության հիմնախնդիրներին՝ կարևորել են մի շարք սկզբունքներ, որոնք առանցքային նշանակություն ունեն եվրոպական իրավակիրառական

պրակտիկայում, մասնավորապես, մատնադրոշմներ վերցնելու ու պահպանելու, դրանց օգտագործման և կոնվենցիոն իրավունքի տեսանկյունից գնահատման խնդիրների շուրջ ՄԻԵԴ-ը գտել է, որ «...իշխանությունների կողմից մատնադրոշմների պահպանումը՝ կապված նույնականացված կամ նույնականացման ենթակա անձի հետ, ինքնին կարող է առաջացնել մասնավոր կյանքի հետ կապված կարևոր խնդիրներ, անկախ դրանց օբյեկտիվ և անհերքելի բնույթից»: Դատարանը գտել է, որ «... դիմողների մատնահետքերը սկզբնապես վերցվել են քրեական հետապնդման շրջանակներում և հետագայում գրանցվել տվյալների ազգային բազայում՝ մշտապես պահպանելու և քրեական նույնականացման նպատակներով ավտոմատ միջոցներով կանոնավոր մշակման նպատակով: Ընդունելի է համարվում այն հանգամանքը, որ ներառվող տեղեկատվության տեսանկյունից ԴՆԹ-ի և բջիջների նմուշների պահպանումը ավելի մեծ ազդեցություն կարող է ունենալ մասնավոր կյանքի վրա, քան մատնադրոշմների պահպանումը: Այնուամենայնիվ, Դատարանը... գտնում է, որ մատնադրոշմների պահպանումը համարվում է միջամտություն մասնավոր կյանքը հարգելու իրավունքին, չնայած դրա՝ արդարացված լինելու հանգամանքը պարզելիս անհրաժեշտ է տարանջատել մատնահետքերի վերցնումը, օգտագործումը և պահպանումը, մի կողմից և նմուշներն ու պրոֆիլները, մյուս կողմից (CASE OF S. AND MARPER v. THE UNITED KINGDOM, Applications nos. 30562/04 and 30566/04, 4 of December 2008):

Վերոհիշյալ գործի շրջանակներում դատարանը կարևորել է նաև՝ «... որ հանրային մարմինների կողմից անհատական տվյալների պահպանումն ինքնին պետք է համարել տվյալ անձի մասնավոր կյանքի վրա ուղղակի ազդեցություն ունեցող հանգամանք, անկախ դրանց հետագա օգտագործման հանգամանքից: ... Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում պիտակավորման ռիսկը, ելնելով այն հանգամանքից, որ դիմողների կարգավիճակում գտնվող անձինք, ովքեր չեն դատապարտվել որևէ իրավախախտման համար և անմեղության կանխավարկածի իրավունք ունեն, արժանանում են նույն վերաբերմունքին, ինչ դատապարտված անձինք: Այս կապակցությամբ, Դատարանը պետք է հաշվի առնի, որ Կոնվենցիայի համաձայն յուրաքանչյուրի անմեղ համարվելու իրավունքը ներառում է այն ընդհանուր կանոնը, համաձայն որի արդարացումից հետո մեղադրված անձի անմեղության վերաբերյալ որևէ կասկած չպետք է առկա լինի (Rushiti v. Austria, no. 28389/95, § 31, 21 March 2000): Ճիշտ է, դիմողների անձնական տվյալների պահպանումը չի կարող հավասարվել կասկածների առկայության հետ: Սակայն, նրանց ընկալումն առ այն, որ նրանց չեն վերաբերում որպես անմեղ մարդկանց, աճում է այն փաստի ուժով, որ նրանց տվյալները պահպանվում են անորոշ ժամանակով նույն կերպ, ինչ դատապարտված անձանց տվյալները, մինչդեռ իրավախախտ-

ման մեջ երբևէ չկասկածված անձանց տվյալները ոչնչացվում են: ... Դատարանը համարում է, որ չդատապարտված անձանց տվյալների պահպանումը կարող է վնասակար լինել անչափահասների դեպքում, ինչպես առաջին դիմողի դեպքն է, հաշվի առնելով նրանց հատուկ կարգավիճակը և նրանց զարգացման ու հասարակության մեջ ինտեգրվելու կարևորությունը: Որպես եզրակացություն Դատարանը գտնում է, որ հանցագործության մեջ կասկածված և հետագայում արդարացված անձի մատնադրոշմների, ԴՆԹ-ի և բջիջների նմուշների պահպանման լիազորությունների ընդհանուր և ոչ խտրական բնույթը, ինչպես սույն գործով դիմողների գործում, չի պահպանում արդար հավասարակշռություն Բախվող հանրային և մասնավոր շահերի միջև, և որ պատասխանող պետությունը գերազանցել է այս հարցի հետ կապված ընդունելի հայեցողության շրջանակը: Հետևաբար, այդպիսի պահպանումը համարվում է դիմողների մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքին անհամաչափ միջամտություն և չի կարող համարվել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»:

Եվրոպական միության արդարադատության դատարանի նախադեպային փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է կենսաչափական տվյալների հավաքման, օգտագործման իրավաչափության գնահատման սկզբունքային մոտեցումների մասին, համաձայն որոնց.

- մատնահետքերը կարող են օգտագործվել միայն անձնագրի նույնականացման և այն ունեցող անձի ինքնության հաստատման համար,

- իրավակարգավորումը պետք է ապահովի չլիազորված անձանց կողմից մատնահետքերը ներառող տեղեկատվության հասանելիությունից,

- այդ տվյալները պետք է պահպանվեն տվյալ անձի անձնագրում ներդրված խիստ ապահով կրիչում,

- պետք է նկատի ունենալ, որ վերոնշյալ թիվ 2252/2004 կարգավորման 1(2) հոդվածն իրավական հիմք չի սահմանում մատնահետքերի պահպանման համար, բացառությամբ հենց տվյալ անձին պատկանող անձնագրերում պահպանվողների,

- մատնահետքերի պահպանման որևէ այլ մեթոդ կամ ձև չի կարող ինքնին մեկնաբանվել որպես իրավական հիմք՝ հավաքված տվյալների պահպանման կենտրոնական բազա ստեղծելու համար, կամ այդ տվյալների՝ Եվրոպական միությունն ապօրինի մուտք գործելը կանխելու նպատակից տարբերվող այլ նպատակով օգտագործման համար,

- վերոհիշյալի համատեքստում պետք է նշել, որ մատնահետքերի տվյալները չպետք է օգտագործվեն այլ կերպ, որը վերազանցում է կեղծ անձնագրերի օգտագործումը կանխելու նպատակին հասնելու համար անհրաժեշտ սահմանը Case C 291/12, Michael Schwarz v. Stadt Bochum) (JUDGMENT OF THE COURT (Fourth Chamber), 17 October 2013:

Սահմանադրական դատարանն անհատական, այդ թվում՝ կենսաչափական, տվյալների հավաքման, օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման եվրոպական փորձի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է համարում կարևորել նաև սահմանադրական վերահսկողության փորձը: Մասնավորապես, Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդն իր FRA-2012-1-004 որոշման շրջանակներում անհատական տվյալների համակարգի ստեղծումը, մի կողմից, համարում է նույնականացման քարտեր և ճանապարհորդական փաստաթղթեր տրամադրելու համար պահանջվող տվյալների պահպանմանը և այդպիսի փաստաթղթերի տրամադրման երաշխավորմանն ու դրանց կեղծման դեմ գործողությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործընթաց: Մյուս կողմից՝ Սահմանադրական խորհուրդը դիտարկել է տեղեկատվական բազայի բնութագիրը և գտել, որ բնակչության վերաբերյալ տվյալների բազայում ներառված ողջ տեղեկատվությունից կենսաչափական տվյալները, մասնավորապես, մատնահետքերը, համարվում են հատուկ վերաբերմունք պահանջող և համարժեք իրավակարգավորման առարկա:

Միաժամանակ, անձնագրերի (նույնականացման քարտերի) տրամադրման և դրա հետ կապված անհատական (կենսաչափական) տվյալների հավաքման, օգտագործման և պահպանման հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է դրա տարաբնույթ բովանդակության մասին: Որոշ պետություններում կենսաչափական տվյալների հավաքումն ունի երկակի նպատակ՝ անձի նույնականացման և հանցավորության դեմ պայքարի (Արգենտինա, Ավստրալիա, Բրազիլիա, Իսրայել, Շվեդիա, ԱՄՆ և այլն):

7. Անդրադառնալով վեճի առարկա իրավակարգավորումներում «իրավունքների» ու «պարտականությունների» փոխադարձության և համարժեքության ապահովումը երաշխավորելու խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-792, ՄԴՈ-833, ՄԴՈ-844, ՄԴՈ-934 և այլն) իրավունքի տարբեր բնագավառներում իրավասուբյեկտների **իրավունքների ու պարտականությունների փոխադարձության, համարժեքության** և դրանց արդյունավետ իրացման խնդիրների սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելով՝ ընդգծել է դրանց կարևորությունը ոչ միայն տվյալ իրավակարգավորման արդյունավետության, այլև սահմանադրական օրինականության ապահովման տեսանկյունից: Վերահաստատելով իր հիշյալ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև պարզել, թե վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում «իրա-

վունքի» և «պարտականության» փոխադարձության ապահովմամբ իրավական ինչպիսի՝ հետևանքներ կարող են առաջանալ հասարակական այլ հարաբերությունների կարգավորման շրջանակներում և, մասնավորապես՝ սահմանադրական այլ իրավունքների ու ազատությունների ազատ իրականացման առնչությամբ, ինչպես նաև, փոխադարձությամբ հանդերձ՝ վիճելի նորմերում ապահովված է, արդյոք, «իրավունքի» և «պարտականության» **համարժեքությունը** որպես իրավակարգավորման ժողովրդավարական սկզբունք, այն դիտարկելով նաև ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի պահանջների համատեքստում:

Այդ տեսանկյունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե՝

- իրավաչափ է, արդյոք, քաղաքացուն նույնականացման քարտ տրամադրելիս ուստիկանության մարմնում նրա աջ և ձախ ձեռքերի ցուցամատների կամ՝ աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները վերցնելը,

- իրավաչափ է, արդյոք, քաղաքացու կենսաչափական տվյալների կենտրոնացված մշակումը,

- անձի մատնադրոշմները վերցնելը, կենսաչափական տվյալների մշակումն առնչվում է, արդյոք, ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով երաշխավորված անձի իրավունքների ու ազատությունների իրացման հետ, և որպես իրավական հետևանք՝ անձի սահմանադրական ինչ այլ իրավունքներ ու ազատություններ կարող են սահմանափակվել, հետևաբար՝ անձանց, այդ թվում հասարակության կրոնական համոզմունքներ ունեցող անդամների նկատմամբ երաշխավորվում է, արդյոք, իրավահավասար մոտեցում:

Վիճելի իրավակարգավորում նախատեսող նորմերի համակարգված վերլուծությունը վկայում է, նախ՝ որ դրանցում սուբյեկտիվ բնույթի պարտականությունների սահմանումն ինքնանպատակ չէ և պայմանավորված չէ ձևական անհրաժեշտությամբ, այլ ծառայեցվում է ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային շահերին: Մասնավորապես, պետության կողմից անձին տրվող պաշտոնական փաստաթղթում (նույնականացման քարտում) անձնական տվյալների արտացոլումն իրավական անհրաժեշտություն է, առանց որի սկզբունքորեն անհնարին է իրականացնել անձի նույնականացում՝ որոշելու համար նրա ինքնությունը, քաղաքացիությունը և այլն: Նման տվյալների ներկայացման պարտականությունն նախատեսված էր նաև ՀՀ կառավարության 25.12.1998 թվականի թիվ 821 որոշմամբ (կից հավելվածի 2-րդ բաժին) սահմանված անձնագրի (նախկին նմուշի) տրամադրման դեպքում: Ընդ որում, եթե «նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քարտ ստանալը քաղաքացու իրավունքն է, ապա ՀՀ

կառավարության հիշյալ որոշմամբ այն **պարտականություն էր**, որի կատարումն էլ պայմանավորված էր մի շարք այլ պարտականությունների կատարմամբ: Բացի դրանից, անձի նույնականացումը, ելնելով նաև ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված պահանջներից ու իրողություններից, օբյեկտիվորեն անհրաժեշտ է իրականացնել իրավական և առաջավոր տեխնիկական այնպիսի եղանակներով ու միջոցներով (այդ թվում և՛ մատնադրոշմներ վերցնելու միջոցով), որոնց գործադրման պայմաններում հնարավորինս երաշխավորվի անձի նույնականացման **ճշգրտությունը, օբյեկտիվությունը** և այդ գործընթացների արդյունքում ձեռք բերված **անձնական տվյալների պաշտպանվածությունը**, որը նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով երաշխավորված պետության բացառիկ իրավագործությունն է, ինչպես նաև սահմանադրական պարտականությունը, որը բխում է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի պահանջներից: Իր հերթին, նույնականացումը միտված է երաշխավորելու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում անձի՝ որպես իրավասուբյեկտի լիարժեք գործունեությունը (քաղաքացիաիրավական գործունակությունը): Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող իրավակարգավորման ընդհանուր բովանդակությունից անմիջականորեն հետևում է, որ ինչպես նույնականացման քարտի տեխնիկական մասում ամփոփված անձնական տվյալները, այնպես էլ հանձնված մատնադրոշմները **բացառապես անհրաժեշտ են անձի՝ որպես ՀՀ քաղաքացու նույնականացումն ապահովելու համար**, որն անհրաժեշտ է տարբեր իրավահարաբերություններում նրա՝ որպես ՀՀ քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների ու պարտականությունների իրացման նպատակով: Միաժամանակ, Սահմանադրության 23-րդ հոդվածի երկրորդ մասում ամրագրված իրավական պահանջի համաձայն «...արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով»: Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական նման համարժեք պայմանների ստեղծումը, երբ հստակեցված է անձնական (կենսաչափական) տվյալների հավաքման իրավական նպատակը, **օրենքով չնախատեսված այլ նպատակներով (պայմաններով) օգտագործման բացառումը պետության սահմանադրաիրավական պարտականությունն է**: Այն միտված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով, 11.3-րդ հոդվածի առաջին մասով ամրագրված և մի շարք այլ սահմանադրաիրավական նպատակներով պայմանավորված խնդիրների լուծմանը: **Իրավակարգավորման այսպիսի սկզբունքի ընկալման և կիրառման պայմաններում**

սույն գործով վիճարկվող նորմերը սահմանադրականության խնդիր չեն հարուցի:

Մյուս կողմից, սահմանադրական դատարանը գտնում է, որ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրների կատարմանն ուղղված օրենսդրական այս կամ այն կարգավորմամբ չպետք է վտանգվի (արգելափակվի) քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների ազատ իրականացումը: Սահմանադրությունն իրավական միասնական փաստաթուղթ է, որում սահմանված նորմերը գործում են անմիջականորեն և ենթակա են անվերապահ կատարման: Օրենքով են սահմանվում դրանց կատարման կարգն ու պայմանները (Սահմ. 6-րդ հոդված): Հետևաբար, օրենսդիրը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավակարգավորումներ, **որոնք բացառեն անձանց սահմանադրական իրավունքների ու ազատությունների որևէ սահմանափակում, եթե այն պայմանավորված չէ Սահմանադրությամբ թույլատրելի հանգամանքներով:** Այլ կերպ, եթե որևէ իրավակարգավորման շրջանակներում խախտվում է այդ պահանջը, ապա այն դադարում է իրավական և սոցիալական, հետևաբար՝ նաև սահմանադրական լինելուց, իսկ օրենքով համապատասխան երաշխիքների (կանոնակարգման) բացակայությամբ էլ՝ պայմաններ են ստեղծվում հակասահմանադրական իրավիճակի առաջացման համար:

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի նորմերի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման համատեքստում վերլուծությունը վկայում է, որ նախատեսված սուբյեկտիվ բնույթի որոշակի իրավունքներ՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է պարտականություններ, որոնք թեն միտված են հիշյալ օրենքով հետապնդվող իրավական նպատակի իրագործմանը, այն է՝ ՀՀ քաղաքացիների նույնականացումն ապահովելուն, այնուհանդերձ, որոշակի քաղաքացիների նկատմամբ, որոնք իրենց կրոնական համոզմունքներից ելնելով ի վիճակի չեն կատարելու մատնադրոշմներ հանձնելու վերաբերյալ նույն օրենքի պահանջը, քանի որ կրոնական համոզմունքներ ունեցող անձանց համար այդ պարտականության կատարման անհնարինության հետևանքով, երբ սահմանված չեն իրավական այլընտրանքային պայմաններ, այդ անձինք զրկվում են նույնականացման քարտ ստանալու իրավունքի իրացման, հետևաբար՝ նաև իրավահարաբերություններին լիարժեք մասնակցելու հնարավորությունից: Այս առումով, սահմանադրական դատարանը գտնում է, որ չնայած վիճելի իրավակարգավորումներն ինքնին հետապնդում են իրավաչափ նպատակ, պարունակում են անձի նույնականացում երաշխավորող նորմեր, սակայն բարոյահոգեբանական առումով պետք է ընկալելի լինեն նաև հասարակության այն անդամների կողմից, ովքեր իրենց կրոնական համոզմունքներին համապատասխան ի վիճակի չեն

միակերպ ընկալել և կատարել դրանցում բովանդակված պահանջները՝ կապված մատնահետքեր հանձնելու, կենսաչափական տվյալներ հավաքելու, պահպանելու և օգտագործելու հետ: Նորմատիվ այդ պահանջների իրացումը չպետք է վտանգի կամ արգելափակի անձի Սահմանադրությամբ երաշխավորված (այդ թվում՝ սահմանափակման ոչ ենթակա) այլ իրավունքների ազատ իրականացումը: Օրենսդրական կարգավորումները չպետք է, մի կողմից, ապահովեն կրոնական համոզմունքների ազատ իրականացումը, իսկ մյուս կողմից, երբ խնդիրը հանգում է սահմանադրական այլ իրավունքների կամ պետության սահմանադրաիրավական պարտականությունների իրականացմանը, արգելափակեն կամ անարդյունավետ դարձնեն դրանց իրացումը, ինչը տեղի ունի վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում, քանի որ կրոնական համոզմունքներ ունեցող անձը հայտնվում է իրավական երկընտրանքի առջև. կամ կատարել օրենքի պահանջը՝ հրաժարվելով իր համոզմունքներից (ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով, 27-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված), կամ չկատարել այդ պահանջը, համապատասխանաբար՝ իրացնելով իր սահմանադրական իրավունքը (հավատարիմ մնալով իր համոզմունքներին):

Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին:

8. Անդրադառնալով վիճելի իրավակարգավորման սահմանադրականությունը մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի և դրա իրացման թույլատրելի շրջանակների, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշների համատեքստում գնահատելու խնդրին՝ պարզելու համար հանրային շահերով և պետության պոզիտիվ պարտականության կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված անձի սահմանադրական կոնկրետ իրավունքի սահմանափակման իրավաչափությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի առաջին մասով երաշխավորված իրավունքը նույն հոդվածի երկրորդ մասի հիմքերով կարող է սահմանափակվել միայն օրենքով, «եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար», որից, ինչպես և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումներից հետևում է, որ

մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացումն օրենքով ենթակա է սահմանափակման, եթե.

- եկեղեցական արարողությունները, պաշտամունքի այլ ծիսակատարությունները խախտում են կամ կարող են խախտել հասարակական անվտանգությունը,

- այդ արարողությունները, ծիսակատարություններն սպառնում են մարդկանց առողջությանը, խախտում այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Համադրելով «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի սահմանափակման սահմանադրական վերոհիշյալ չափանիշների հետ՝ ակնհայտ է, որ վիճելի իրավակարգավորումները չեն պարունակում ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հանգամանքներով պայմանավորված որևէ նորմատիվ պահանջ (պայման):

Կրոնական համոզմունքների (մտքի, խղճի և կրոնի) ազատությունը, որպես մարդու հիմնական սուբյեկտիվ իրավունք, երաշխավորված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերով:

ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 18-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (կից կամընտիր արձանագրություններով) 18-րդ հոդվածի, Կրոնի կամ համոզմունքների հիմքի վրա ամեն տեսակ անհանդուրժողականության և խտրականության չեզոքացման մասին հռչակագրի (1981թ.), Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 9-րդ հոդվածի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության վերաբերյալ կոնֆերանսի Եզրափակիչ ակտի (Գլուխ 1, ա), սկզբունք VII), ինչպես նաև Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթղթի (1989թ.), ԵԱՀԿ մարդկային չափանիշի մասնակից պետությունների ներկայացուցիչների խորհրդածողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթի (1990թ.), «ԱՊՀ երկրներում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների միջազգային պարտավորությունների մասին» հռչակագրի (1994թ.), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԱՊՀ կոնվենցիայի (1995թ.) իրավակարգավորումների շրջանակներում նույնպես երաշխավորված է կրոնական համոզմունքների և դրանց անմիջականորեն առնչվող սուբյեկտիվ այլ իրավունքների ազատությունը և դրա իրավական պաշտպա-

նությունը, որը վերոհիշյալ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների շրջանակներում ներպետական օրենսդրության մակարդակում պարտադիր են ապահովման անդամ պետությունների կողմից: Հայաստանի Հանրապետությունում այդ իրավունքի իրացման երաշխավորման նպատակին է ծառայում «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը, որի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար»: Միաժամանակ, օրենսդիրը հստակեցրել է կրոնական համոզմունքների ազատության իրավունքի իրացման շրջանակներում պետության միջամտության սահմանները (օրենքի 17-րդ, 18-րդ հոդվածներ):

9. Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-649 որոշմամբ անդրադառնալով օրենքով նախատեսված անձի սուբյեկտիվ պարտականության և Սահմանադրությամբ երաշխավորված խղճի, կրոնի, համոզմունքների ազատության իրավունքի հարաբերակցության, դրանց հավասարակշռման սահմանադրաիրավական գնահատման խնդրին՝ ընդգծել է, որ «... Սահմանադրական դատարանի խնդիրը չէ պարզել այդ համոզմունքների դավանաբանական էությունը, սակայն օրենքի կիրառման առաջին իսկ պահից ծագած այս խնդիրները մղել են և՛ օրենսդրին, և՛ գործադիր իշխանությանը տվյալ անձանց համար գտնելու այլընտրանքային լուծումներ»: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառման նույնպիսի խնդիր առկա է սույն գործով վեճի առարկա նորմեր պարունակող օրենքներում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի խնդիրն է սույն գործով վիճելի իրավակարգավորումների շրջանակներում նախատեսել այնպիսի այլընտրանքային ընթացակարգեր, որոնց պարագայում անձը կամընտրական հնարավորություն ունենա իր կրոնական համոզմունքներին համահունչ համապատասխանեցնելու իր վարքագիծը: Այս առումով, սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում պատասխանող կողմի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ «... հասարակական կյանքի տարբեր ոլորտներում անձանց իրավունքների անխոչընդոտ իրականացումն ապահովելու նպատակով, երբ այդպիսի իրավունքների իրականացումը պայմանավորված է անձը հաստատող փաստաթղթերի պարտադիր առկայությամբ, պետք է նախատեսվեն համապատասխան իրավական միջոցներ, որոնք ընդունելի կլինեն կրոնական համոզմունքների տեսանկյունից և անձանց չեն կանգնեցնի կրոնական համոզմունքների և հիմնական իրավունքների

իրականացման միջև ընտրություն կատարելու փաստի առջև»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում օրենսդրական լուծումներ գտնելը, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 25.12.1998 թվականի թիվ 821 որոշման համապատասխան փոփոխությունները կարող են կրոնական համոզմունքներ ունեցող անձանց նախկին նմուշի անձնագրերի վավերականության ժամկետի երկարացման պայմաններում ժամանակավոր երաշխիք հանդիսանալ այդ անձանց՝ որպես ՀՀ քաղաքացու՝ իրենց իրավունքների ու ազատությունների իրացման համար:

Սահմանադրական դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի գործող այն իրավակարգավորման վրա, համաձայն որի՝ «Քաղաքացիական պարտականությունների և կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի և տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ» (19-րդ հոդված): Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավական մոտեցումը պետք է իրացվելի լինի նաև նույնականացման քարտերի տրամադրման հետ կապված հարաբերությունների կարգավորման շրջանակներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է իրավակարգավորման բաց, որի հաղթահարումն ՀՀ Ազգային ժողովի խնդիրն է, ինչի մասին է վկայում նաև սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բացատրության մեջ բերված՝ սույն որոշման 3-րդ կետում նշված եզրահանգումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**:

1. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությամբ, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

նախադասությամբ ամրագրված դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

2. «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում ամրագրված նորմը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

8 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1244



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՄԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ» (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Ա. Բախչյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում զրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հոկ-

տեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մեյամիկ անվտանգության բարելավման ծրագիր-Արդյունքների վրա հիմնված փոխառություն» (հատուկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2015թ. նոյեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 19-ին՝ դպրոցների սեյսմակայուն շենքերի ընդգրկվածության բարելավման գործում դպրոցների ուժեղացման և վերակառուցման ծրագրի (ԴՈԻՎԾ՝ 2015 թ. հուլիսի 23-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 797-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կողմից հաստատված՝ Դպրոցների ուժեղացման և վերակառուցման ծրագիր) իրականացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայնագիրն ունի չորս Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Վճարումների ժամանակացույց», Առդիր 3. «Վարկի միջոցների մասհանում» Առդիր 3-ի Հավելված 1-ով, և Առդիր 3-ի Հավելված 2-ով, և Առդիր 4. «Ծրագրի իրականացում»:

3. Ասիական զարգացման բանկը համաձայնում է Հայաստանի Հանրապետությանը վարկ տրամադրել Ասիական զարգացման բանկի հատուկ հիմնադրամի միջոցներից, տարբեր արժույթներով՝ վաթսուներեք միլիոն երկու հարյուր հիսունինը հազարի չափով՝ փոխառության հատուկ իրավունքին համարժեք (ՓՀԻ 63.259.000): Ակնկալվում է, որ Ծրագիրը կավարտվի մինչև 2020 թվականի նոյեմբերի 30-ը: Վարկի Փակման ամսաթիվը 2021թ. մայիսի 31-ն է կամ մեկ այլ ամսաթիվ, որի վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը և Ասիական զարգացման բանկը կարող են ժամանակ առ ժամանակ գալ համաձայնության, իսկ մայր գումարի մարման և տոկոսների վճարման արժույթն ԱՄՆ դոլարն է:

4. Ծրագրի նպատակն է նպաստել Դպրոցների ուժեղացման և վերակառուցման ծրագրի իրականացմանը դպրոցների սեյսմապահով շենքերի ընդգրկման բարելավման գործում: Ծրագիրը կնպաստի Դպրոցների ուժեղացման և վերակառուցման ծրագրին դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացման, սեյսմիկ աղետին պատրաստվածության և

արձագանքման կարողությունների ուժեղացման, սեյսմիկ աղետի ռիսկի կառավարման և նվազեցման համար օժանդակող քաղաքականության և համակարգերի բարելավման և Ծրագրի իրագործման և իրականացման կարողությունների բարձրացման ոլորտներում:

5. Անհրաժեշտ է նշել, որ Ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության՝ որպես գործադիր մարմին, և Տարածքային զարգացման հայկական հիմնադրամի՝ որպես իրականացնող գործակալության կողմից, և այդ նպատակով Հայաստանի Հանրապետությունը Տարածքային զարգացման հայկական հիմնադրամին կտրամադրի Համաձայնագրով տրամադրված վարկային միջոցներն Ասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության համար ընդունելի դրույթներով ու պայմաններով (Նախաբանի «Բ» կետ):

6. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին, Ասիական զարգացման բանկին վճարել տարեկան 2% տոկոսադրույք արտոնյալ ժամկետի ընթացքում (ժամանակահատված, որը նախորդում է Մայր գումարի առաջին մարման ամսաթվին՝ 2020թ. նոյեմբերի 15) և դրանից հետո՝ Վարկային հաշվից մասհանված և ժամանակ առ ժամանակ մարման ենթակա Վարկի գումարի դիմաց (հոդված II, Բաժին 2.02, կետեր «ա», «բ», Բաժին 2.03, Առդիր 2),

- սկսած 2020թ. նոյեմբերի 15-ից մինչև 2040թ. մայիսի 15-ը, կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին մարել Վարկային հաշվից մասհանված Վարկի մայր գումարը՝ 1.581.475 դոլար մասնաբաժնով (հոդված II, Բաժիններ 2.04, 2.03, Առդիր 2),

- Վարկի միջոցները տրամադրել Տարածքային զարգացման հայկական հիմնադրամին Ասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության համար փոխադարձաբար ընդունելի պայմաններով ու դրույթներով, ինչպես նաև կազմակերպել, որ Վարկի միջոցները օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, և ապահովել, որպեսզի Վարկի միջոցներն օգտագործվեն ըստ նպատակի՝ տնտեսման, արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության ընդունված սկզբունքների համաձայն (հոդված III, Բաժին 3.01),

- ապահովել, որպեսզի Վարկի ոչ մի միջոց չօգտագործվի Բացառված ծախսերը ֆինանսավորելու համար (հոդված III, Բաժին 3.03),

- Ծրագիրն իրականացնելիս կատարել կամ ապահովել, որպեսզի Տարածքային զարգացման հայկական հիմնադրամը կատարի Համաձայնագրի 4-րդ Առդիրում սահմանված բոլոր պարտականությունները

(հոդված IV, Բաժին 4.01, կետ «բ»),

- Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչներին հնարավորություն տալ ստուգելու Ծրագիրը, ապրանքներն ու աշխատանքները և ցանկացած համապատասխան գրառում ու փաստաթուղթ (հոդված IV, Բաժին 4.02),

- ապահովել կամ կազմակերպել, որպեսզի Տարածքային զարգացման հայկական հիմնադրամն ապահովի, որ իր վարչությունների և գործակալությունների գործողությունները կապված Ծրագրի իրականացման և Ծրագրի կառույցների շահագործման հետ, իրականացվեն և համակարգվեն համաձայն վստահելի վարչարարական քաղաքականության և ընթացակարգերի (հոդված IV, Բաժին 4.03),

- Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվում է նաև սերտորեն համագործակցել Ասիական զարգացման բանկի հետ Վարկի նպատակների իրագործումն ապահովելու համար, անհապաղ տեղեկացնել Ասիական զարգացման բանկին ցանկացած պայմանի մասին, որը խոչընդոտում է կամ սպառնում է խոչընդոտել Ծրագրի ընթացքին, Համաձայնագրի ներքո պարտականությունների իրականացմանը կամ Վարկի նպատակների իրագործմանը (հոդված IV, Բաժին 4.06, կետեր «ա» և «բ»):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**».

1. 2015 թվականի հոկտեմբերի 19-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր-Արդյունքների վրա հիմնված փոխառություն» (Հատուկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1245



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հունիսի 15-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

արձանագրության մեջ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2015 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (այսուհետ Արձանագրություն) ստորագրվել է 2015թ. հունիսի 15-ին:

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագիրը ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2009թ. հոկտեմբերի 29-ին:

2. Արձանագրության նպատակն է՝ փոփոխություններ կատարել վերոհիշյալ պայմանագրում, մասնավորապես.

- «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամը» վերանվանվել է «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամ»,

- Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի քարտուղարության գործառույթները վերապահվել են Եվրասիական զարգացման բանկին՝ համաձայն Հիմնադրամի մասին կանոնադրության եւ Հիմնադրամի այլ կիրառելի փաստաթղթերի,

- Հիմնադրամի ավանդապահի գործառույթները վերապահվել են Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությանը,

- Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի զուտ շահույթի մի մասն ուղղվել է Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի՝ ցածր եկամուտ ունեցող մասնակից պետություններում դրամաշնորհային ծրագրերի իրականացմանը:

3. Արձանագրությունն ստորագրման պահից ժամանակավորապես կիրառվում է կողմերի կողմից, բացառությամբ այն կողմի, որը վերապահում է կատարել կիրառման վերաբերյալ դրույթի իր նկատմամբ չկիրառվելու կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունը վերապահում է կատարել Արձանա-

գրության վերաբերյալ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը մինչև Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի հունիսի 15-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ /կից վերապահումով/ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 դեկտեմբերի 2015 թվականի
ՄԴՈ-1246



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» 2009
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵՋ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ) ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ Ա. Զանգուղազյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հունիսի 15-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական ընկերակ-

ցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2015 թվականի դեկտեմբերի 9ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2015թ. հունիսի 15-ին:

«Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2009թ. հոկտեմբերի 29-ին:

2. Արձանագրության նպատակն է փոփոխություններ կատարել վերոհիշյալ համաձայնագրում, մասնավորապես.

- «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամը» վերանվանվել է «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամ»,

- Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի քարտուղարության գործառույթները վերապահվել են Եվրասիական զարգացման բանկին՝ համաձայն Հիմնադրամի մասին կանոնադրության եւ Հիմնադրամի այլ կիրառելի փաստաթղթերի,

- Հիմնադրամի ավանդապահի գործառույթները վերապահվել են Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությանը:

3. Արձանագրությունն ստորագրման պահից ժամանակավորապես կիրառվում է կողմերի կողմից, բացառությամբ այն կողմի, որը վերապահում է կատարել կիրառման վերաբերյալ դրույթի՝ իր նկատմամբ չկիրառվելու կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունը վերապահում է կատարել Արձանագրության վերաբերյալ, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը մինչև Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համար դրա ուժի մեջ մտնելը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2015 թվականի հունիսի 15-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ (կից վերապահումով) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1247



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

15 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դնրբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի

դեկտեմբերի 10-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երրորդ վարկ» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի դեկտեմբերի 10-ին:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 8-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է երեսունմեկ միլիոն (31.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Հիշյալ վարկային համաձայնագիրը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1126 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2013 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-096-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև «Զարգացման քաղաքականության առաջին ֆինանսավորում» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 8-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է քառասունմեկ միլիոն (41.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Հիշյալ ֆինանսավորման համաձայնագիրը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 19-ի ՍԴՈ-1125 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2013 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-097-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երկրորդ

վարկ» վարկային համաձայնագիրն ստորագրվել է 2014 թվականի նոյեմբերի 19-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է յոթանասունհինգ միլիոն (75.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Հիշյալ վարկային համաձայնագիրը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-1177 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2014 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-133-Ն որոշմամբ:

2. Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրով Վերականգնման և զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է հիսուն միլիոն (50.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (Վարկ), Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և ժամկետներում, Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրին (Ծրագիր) օժանդակելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Վարկային համաձայնագրով սահմանված չափով և կարգով վճարել կանխավճար և պարտավճար.

բ) Վարկային համաձայնագրով սահմանված չափով և կարգով վճարել տոկոսագումար՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին.

գ) Վարկի մայր գումարի մարումը կատարել սկսած 2030 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2040 թվականի մայիսի 15-ը ներառյալ՝ 4.76 տոկոսի չափով, իսկ 2040 թվականի նոյեմբերի 15-ին՝ 4.80 տոկոսի չափով.

դ) վարկային միջոցները չօգտագործել բացառված ծախսերը ֆինանսավորելու համար: Եթե ցանկացած ժամանակ Բանկը որոշում է, որ Վարկի որևէ գումար օգտագործվել է բացառված ծախսերի դիմաց վճարում կատարելու նպատակով, ապա Վարկառուն պետք է Բանկից ծանուցում ստանալով անհապաղ Բանկին փոխհատուցի այդ վճարման գումարին համարժեք գումար: Նման պահանջի համաձայն Բանկին փոխհատուցված գումարները չեղյալ են համարվում:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի դեկտեմբերի 10-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրին:

Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունների համաձայն՝ Վարկային համաձայնագիրը նպատակաուղղված է օժանդակելու հարկաբյուջետային, սոցիալական և շրջակա

միջավայրի կայունության խթանմանը և մրցակցության ամրապնդմանը, իսկ Ծրագրի շրջանակներում տրամադրված միջոցներն ուղղվելու են բյուջետային ծախսերի ֆինանսավորմանը:

5. Սահմանադրական դատարանն արձանագրած՝ է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները մասնավորապես վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորություններին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2015 թվականի դեկտեմբերի 10-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության երրորդ վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15 դեկտեմբերի 2015 թվականի
ՄԴՈ-1248



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԼԻՍԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 414.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-
ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

22 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Ա. Գրիգորյանի և դիմողի ներկայացուցիչ Հ. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ալիսա Գրիգորյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահ-

մանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ալիսա Գրիգորյանի՝ 2015թ. օգոստոսի 31-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը» վերտառությամբ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է. «Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝ 1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է.»:

Սույն գործով վիճարկվող դրույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածում ամրագրվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի հունիսի 10-ին ընդունված և 2014 թվականի հուլիսի 3-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-48-Ն ՀՀ օրենքով:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի հուլիսի 29-ի դատավճռով Ալիսա Գրիգորյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել ազատազրկման 5 տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման:

Դատարանի նշված դատավճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք՝ միջնորդելով բեկանել այն և կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 11.11.2014թ. որոշմամբ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի հուլիսի 29-ի դատավճռի-

որ թողել է անփոփոխ, իսկ վերաքննիչ բողոքը՝ մերժել:

Նշված որոշման դեմ Ալիսա Գրիգորյանի պաշտպանի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել՝ խնդրելով կասեցնել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 11.11.2014թ. որոշման ուժի մեջ մտնելը: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը 20.02.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ նշելով, որ. «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը ... հրապարակվել է 2014 թվականի նոյեմբերի 11-ին: Գործի նյութերից երևում է, որ պաշտպանը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել 2014 թվականի դեկտեմբերի 24-ին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետն անցնելուց հետո»:

3. Դիմողը, վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ, նշում է, որ սահմանված ժամկետներից ուշ ներկայացված բողոքները վարույթ ընդունելու վերաբերյալ որոշումների համար դատարաններն օժտված են հայեցողական լիազորությամբ: Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկան տարբերակված մոտեցումներ է կիրառում իր կամքից անկախ հանգամանքներում ՀՀ վերաքննիչ դատարան և ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքների պարագայում: Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշումը՝ դիմողը նշում է, որ հիշյալ որոշման հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ձևավորվել է այնպիսի իրավակիրառ պրակտիկա, որի պարագայում բողոքաբերը պարտավորություն չի կրում դատարանին խնդրել հարգելի ճանաչել իր կողմից բաց թողնված ժամկետները: Դիմողը նշում է նաև, որ բողոքարկման համար ժամկետի հաշվարկի նման մեխանիզմ է գործում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող բողոքների համար, ինչը վկայում է այն մասին, որ իրավակիրառ պրակտիկան որոշակիության առումով հաստատում է, որ վերադատության կարգով որոշումների բողոքարկման համար ժամկետը հաշվարկվում է դրանք ստանալու պահից:

ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխանաբար՝ մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների տրամաբանության վրա հիմնվելով՝ դիմողը կարծում է, որ վիճարկվող դրույթներն իրավական որոշակիության, դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավական չափորոշիչների երաշխավորվածության տեսանկյունից խնդրահարույց են: Համադրված կարգով վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողը եզրահանգել է, որ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետն այնքանով, որքանով այն բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնում է դատարանի հայեցողությանը և իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչում հարգելի, հակասում է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, նշում է, որ թեև բողոքարկման ժամկետը հաշվարկվում է դատական ակտի հրապարակման պահից, այդուհանդերձ, օրենսդիրն իրավական երաշխիքների ամրագրմամբ ապահովել է անձանց բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունը: Բողոքարկման իրավունքի իրականացման համար վճռական նշանակություն ունի դատական ակտը հասցեատիրոջը ժամանակին հանձնելը: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման երաշխիքներից է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու իրավական հնարավորությունը: Այն իրենից ներկայացնում է որոշակի իրավական ընթացակարգ, որի շրջանակներում դատարանը գնահատում է դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ «բաց թողնված ժամկետի վերականգնումն այն հարցերից է, որտեղ դատարանը հայեցողություն դրսևորելու իրավասություն ունի»: Պատճառների հարգելիությունը գնահատողական հասկացություն է, և յուրաքանչյուր դեպքում այն գնահատելու անհրաժեշտություն է առաջանում: Սակայն դատական հայեցողությունը պետք է իրականացվի ոչ թե կամայական, այլ օրենքի շրջանակներում: Դատարանը բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում ունի ոչ թե անսահմանափակ հայեցողական լիազորություն, այլ նշված հայեցողական լիազորության իրականացումը սահմանափակված է այդ պատճառների հարգելիությամբ: Բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում վճռորոշը պատճառների հարգելիությունն է, որը ելակետային է համարվում դատարանի կողմից որոշում կայացնելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի առնչությամբ պատասխանողը, վկայակոչելով ՄԴՈ-1052 որոշումը, ՀՀ Դատարանների նախագահների խորհրդի՝ 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշումը, ինչպես նաև ներկայացնելով քննության առարկա հարցի վերաբերյալ օտարերկրյա փորձը, փաստարկում է, որ բոլոր դեպքերում բաց թողնված ժամկետի վերականգնումն իրականացվում է որոշակի իրավական ընթացակարգի պահպանմամբ: Այն է՝ շահագրգիռ անձը պարտավոր է ներկայացնել համապատասխան միջ-

նորոգություն՝ միաժամանակ կցելով ժամկետը բաց թողնելու հարգելիությունը հավաստող ապացույցներ, որոնք ենթակա են ուսումնասիրման և գնահատման դատարանի կողմից: Եթե առանձին դեպքերում դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը կարող է ակնհայտ լինել, ինչպես, օրինակ, դատավարական փաստաթղթերն ուշացումով ստանալու կամ ուղարկելու դեպքերը, ապա այլ դեպքերում հարգելիությունը կարող է վիճելի լինել և պահանջել դրանց ուսումնասիրում և գնահատում:

Ամփոփելով իր կողմից ներկայացված հիմնավորումները՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ամրագրված իրավական պահանջի նշանակությունը՝ հաշվի առնելով մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների պաշտպանության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պահանջները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոցի, արդար դատաքննության տարր հանդիսացող՝ դատարանի մատչելիության իրավունքների երաշխավորվածությունը՝ հաշվի առնելով նաև վերջիններիս, ինչպես նաև դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր մի շարք որոշումներում (մասնավորապես՝ ՄԴՈ-652, ՄԴՈ-665, ՄԴՈ-673, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-780, ՄԴՈ-873, ՄԴՈ-936, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192) դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները: Հիշյալ որոշումներում անդրադառնալով նաև դատական բողոքարկման ինստիտուտի արդյունավետ կիրառման օրենսդրական ապահովման անհրաժեշտությանը՝ սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում

բազմիցս անդրադարձել է այս հարցին և նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան:

Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների ու դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն (Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995): Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը շեշտում է, որ. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն» (Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001) (ՄԴՈ-652),

բ) «... նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն:

Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական

համապատասխան երաշխիքների առկայությունը...» (ՄԴՈ-690),

զ) «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով»:

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (ՄԴՈ-719),

դ) «Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառնություններով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի տեսանկյունից, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից» (ՄԴՈ- 765),

ե) «Սույն գործի շրջանակներում ևս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoi v. France, application no. 34791/97, 14/03/2000)» (ՄԴՈ-1127),

զ) «Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ:

Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ» (ՄԴՈ-1192):

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը կամ առանց քննության թողնելը» վերտառությամբ 414.1-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն իրավապայմանները, որոնց դեպքում վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության: Ըստ այդմ, սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է երկու իրավիճակ, որոնց դեպքում վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, այն է՝ եթե.

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է,

2) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

Վիճարկվող դրույթում ամրագրված՝ բողոք բերելու համար սահմանված ժամկետի հետ կապված իրավակարգավորումն իր ամրագրումն է գտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածում, որի 1-ին մասը քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում: Այսպես, սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը, իր ՄԴՈ-1062 որոշմամբ արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք, ինչպես նաև ՄԴՈ-1062 որոշման մեջ վկայակոչված ՄԴՈ-1052 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հանգում են, մասնավորապես, հետևյալին.

ա) «... ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար» (ՄԴՈ-1052),

բ) «...վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը» (ՄԴՈ-1052),

գ) «... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր նման դեպքերում կողմը պետք է ունենա ողջամիտ ժամկետ դատական ակտն ստանալուց կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալուց, նրան պաշտոնապես հասանելի լինելուց հետո հիմնավոր բողոք ներկայացնելու համար: Իսկ, ինչպես նշվեց, բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից անկախ պատճառներով, իրավունքի

ուժով /ex jure/ բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինի ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը» (ՄԴՈ-1052),

դ) «Այլ խնդիր է, թե Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքների համատեքստում որքանով է երաշխավորված օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետներից օգտվելու իրավական հնարավորությունը՝ հաշվի առնելով դատական ակտի հրապարակման և դատական ակտը հասցեատիրոջը փաստացիորեն հանձնելու պահերի միջև առկա ժամանակային գործոնը և դրանով պայմանավորված՝ դատական ակտը վիճարկելու իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը» (ՄԴՈ-1062),

ե) «... սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար» (ՄԴՈ-1062):

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունն անմիջականորեն փոխկապակցված է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՄԴՈ-1052 և ՄԴՈ-1062 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործի քննությունն անհրաժեշտ է իրականացնել այդ դիրքորոշումների լույսի ներքո: ՄԴՈ-1062 որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու

Ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի: Այսինքն, սահմանադրական դատարանը որպես դրույթի սահմանադրականության պայման նշել է այն, որ նախ պետք է երաշխավորվի օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ պետք է ճանաչվի հարգելի:

Վերոնշյալի հաշվառմամբ, ելնելով նաև անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների առավել արդյունավետ իրացման երաշխավորվածությունից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ, որպես ընդհանուր կանոն, այն պարագայում, երբ վճռաբեկ բողոքը բերվել է օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, ապա բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունն օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն է, հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ հնարավորություն տալ իրավասու մարմնին քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը: Միննույն ժամանակ, որպես հատուկ կանոն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշակի դեպքերում դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը բաց թողնելը պայմանավորված չէ անձի կամքով, առաջացել է անձից անկախ պատճառներով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշյալ դեպքերում ներկայացված միջնորդությունը բավարարելը համապատասխան դատական ատյանի պարտականությունն է հանդիսանում:

Ըստ այդմ, սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով /ex jure/՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

9. Միննույն ժամանակ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է

համարում նշել, որ, մի կողմից, օրենսդրորեն օրյեկտիվորեն հնարավոր չէ թվել բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հիմքում ընկած հանգամանքների հարգելիության բոլոր դեպքերը, մյուս կողմից, սակայն, ելնելով դատական հայեցողության իրավաչափ սահմանափակման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար կլինի հարգելիության որոշակի խումբ հիմքեր օրենսդրորեն ամրագրել: Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչը՝ նշելով, որ «... ոչ միասնական կամ հնարավոր հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու համար անհրաժեշտ այն չափանիշները կամ դատավարական ժամկետի վերականգնման հիմքերի այն մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որոնք յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանան ժամկետի բացթողնման հարգելիությունը գնահատելիս»:

Հետևաբար, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու որոշ հիմքերի իրավական ամրագրումը կնպաստի տվյալ իրավահարաբերության արդյունավետության, ինչպես նաև դատարանների հանրային-իրավական վարքագծի կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ
22 դեկտեմբերի 2015 թվականի
ՄԴՈ-1249

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ -
ԾՐԱԳԻՐ 2» (ԸՆԹԱՅԻՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2015 թվականի

հոկտեմբերի 13-ին ստորագրված՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2» (Ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2015 թվականի դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2» (Ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 13-ին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից:

2. Համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում Առդիր 1-ը՝ «Ծրագրի նկարագիրը», Առդիր 2-ը՝ «Մարման ժամանակացույցը», Առդիր 3-ը՝ «Վարկային միջոցների հատկացումը և մասհանումը», Առդիր 4-ը՝ «Ապրանքների, աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում» և Առդիր 5-ը՝ «Ծրագրի կատարումը, ֆինանսական հարցերը»:

3. Համաձայնագրին համապատասխան՝ Ասիական զարգացման բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 112.970.000 (հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ԱՄՆ դոլարի չափով վարկ (այսուհետ՝ Վարկ)՝ քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքները բարելավելու ծրագիրն (այսուհետ՝ Ծրագիր) իրականացնելու նպատակով:

Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2019թ. սեպտեմբերի 30-ին:

4. Ծրագրի նպատակն է բարելավել քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքները՝ ապահովելով ավելի արդյունավետ, վստահելի, ապահով և մատչելի տրանսպորտային ծառայություններ:

Ծրագրի բաղադրիչներն են՝ «Քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքի բաղադրիչ», որն ունի երեք մաս՝ ա) Արգավանդ Շիրակ ճանապարհի կառուցում, բ) Բաբաջանյան-Աշտարակ մայրուղու կառուցում, գ) Դավիթաշեն-Աշտարակ մայրուղու կառուցում, «Ինստիտուցիոնալ կարողությունների բաղադրիչ», «Ծրագրի իրականացման բաղադրիչ»:

5. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Վարկի օգտագործված հիմնական գումարի դիմաց Բանկին վճարել Համաձայնագրով նախատեսված տոկոսներ,

բ) Վարկի գումարի վրա հաշվարկված տոկոսները և այլ վճարները կատարել տարեկան 2 անգամ, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին,

գ) յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վճարել պարտավճար՝ տարեկան կտրվածքով 0.15%-ի չափով, որը հաշվարկվելու է Վարկի ամբողջական գումարի մասով (հանած ժամանակ առ ժամանակ մասհանվող գումարները),

դ) սկսած 2030 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2037 թվականի մայիսի 15-ը, կիսամյակային մուծումներով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վերադարձնել Վարկի հաշվից մասհանված Վարկի հիմնական գումարը,

ե) վարկային միջոցները հասանելի դարձնել Երևանի համար՝ Բանկին բավարարող պայմաններով, և ապահովել, որ այդ միջոցներն ուղղվեն Երևանի կողմից Ծրագրի ծախսերի ֆինանսավորմանը,

զ) եթե Բանկն այլ որոշում չի կայացրել, Համաձայնագրի Առդիր 4-ում նախատեսված դրույթներով սահմանված կարգով Վարկի միջոցներով գնել կամ ապահովել, որպեսզի գնվեն նախատեսված պարագաները,

է) ապահովել, որպեսզի տեխնիկական աուդիտորական ծառայությունների համար Երևանը վարձի անհատ խորհրդատուներ, խորհրդատվական կարճաժամկետ ծառայություններ, հասարակության իրազեկման և կարողությունների զարգացման ծառայություններ,

ը) ապահովել, որպեսզի յուրաքանչյուր ենթածրագրի նախապատրաստումը, նախագծումը, շինարարությունը, իրականացումը, շահագործումն ու շահագործումից հանելը կատարվեն ՀՀ շրջակա միջավայրի, առողջապահության ու անվտանգության հետ կապված բոլոր օրենքներին և պահանջներին համապատասխան,

թ) երաշխավորել, որպեսզի յուրաքանչյուր ենթածրագրի հետ կապված ոչ մի ֆիզիկական կամ տնտեսական տեղահանում չիրականացվի, մինչև որ վերաբնակեցման պլանին համապատասխան փոխհատուցումներ և օրենքով սահմանված այլ վճարներ չկատարվեն ազդեցության ենթարկվող մարդկանց,

ժ) երաշխավորել, որ Վարկի ոչ մի միջոց չկիրառվի արգելված ներդրումների ցանկում ներառված որևէ գործողություն ֆինանսավորելու համար,

ի) ապահովել, որպեսզի Ծրագրի շրջանակներում Բանկի ֆինանսավորմամբ բոլոր պայմանագրերում ներառված լինեն դրույթներ առ այն, որ

Բանկն իրավունք ունի ատուիտի ենթարկել և ստուգել ցանկացած կապալառուի, մատակարարի, խորհրդատուի:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն վարկային համաձայնագրում առկա չէ պատշաճ հիմնավորում հատկապես «Ապրանքներ» բաղադրիչով /0,04 տոկոս կամ 40000 դրլար/ և «Խորհրդատվական ծառայություններ» բաղադրիչով /11,17 տոկոս կամ 12 մլն 620 հազար դրլար/ հատկացումների հարաբերակցության առնչությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման Բանկի միջև 2015 թվականի հոկտեմբերի 13-ին ստորագրված՝ «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2» (Ընթացիկ գործառնություններ) վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25 դեկտեմբերի 2015 թվականի
ՍԴՈ-1250



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԲԵՐՄԱ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 հունվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ «Բերմա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Գ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում՝ գրավոր ընթացակարգով քննեց «Բերմա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը «Բերմա» ՓԲԸ-ի՝ 2015 թվականի սեպտեմբերի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը /այսուհետ՝ ՀՀ ՎԴՕ/ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 7-ին:

Ընդունման պահից ի վեր օրենսգիրքը փոփոխվել և լրացվել է չորս անգամ /ԱԺ 21.06.2014 ՀՕ-99-Ն, ԱԺ 21.06.2014 ՀՕ-89-Ն, ԱԺ 17.12.2014 ՀՕ-250-Ն, ԱԺ 18.05.2015 ՀՕ-66-Ն օրենքներով/, բայց 95-րդ հոդվածը մնացել է անփոփոխ:

ՀՀ ՎԴՕ՝ «Գործի վարույթը վերսկսելը» վերտառությամբ 95-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

2011թ. «Բերմա» ՓԲԸ-ում /այսուհետ՝ Ընկերություն/ հարկային մարմինների կողմից իրականացված ստուգման արդյունքում կազմվել է թիվ 1001329 ստուգման ակտը, որն Ընկերության կողմից բողոքարկվել է ՀՀ վարչական դատարանում (վարչական գործ ՎԴ/5803/05/12): Մինչև ժամանակ, հարկային մարմինը վերը նշված ակտով սահմանված գումարի բռնագանձման պահանջ է ներկայացրել վարչական դատարան (վարչական գործ ՎԴ3/0314/05/12): Այդ գործով հայցի ապահովման համար Ընկերության գույքի վրա արգելանք է դրվել: Վերջինիս վարույթը 06.12.2012թ. Ընկերության միջնորդության հիման վրա ՀՀ վարչական դատարանի կողմից կասեցվել է մինչև ՎԴ/5803/05/12 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ընկերությունը վճարել է ակտով առաջադրված ընդհանուր գումարը և մարել պարտավորությունն ամբողջությամբ, որի մասին Արտաշատի տարածքային հարկային տեսչության կողմից 22.05.2014թ. տրվել է համապատասխան տեղեկանք:

26.05.2014թ. Ընկերությունը միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ՎԴ3/0314/05/12 գործի վարույթը վերսկսելու, հայցի ապա-

հովման միջոցը վերացնելու և գործը կարճելու մասին: Ի պատասխան նշված միջնորդության՝ Ընկերությունն ստացել է ՆԴԴ-9/3-Ե-151/14 26.05.2014թ. գրությունն այն մասին, որ ՎԴ3/0314/05/12 գործը չի կարող վերսկսվել, քանի դեռ ՎԴ/5803/05/12 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտել, և որ հայցի ապահովման միջոցը վերացնելու և գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություններին վարչական դատարանը կանդրադառնա գործի վարույթը վերսկսելուց հետո:

08.08.2014թ. Ընկերությունը կրկին միջնորդություն է ներկայացրել վարչական դատարանին ՎԴ3/0314/05/12 գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու համար, ի պատասխան որի՝ գրությամբ հայտնել են, որ միջնորդությանը կանդրադառնան ՎԴ3/0314/05/12 գործը վերսկսելուց հետո:

02.02.2015թ. Ընկերությունը նորից միջնորդել է ՎԴ3/0314/05/12 գործը վերսկսել: Վարչական դատարանի դատավորը 06.02.2015թ. գրությամբ կրկին տեղեկացրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալուց հետո, իսկ դրանք 06.02.2015 թվականի դրությամբ դեռևս վերացված չեն:

Վարչական դատարանի նշված գրության դեմ 03.03.2015թ. Ընկերությունը վերաքննիչ բողոք է ներկայացրել, որի ընդունումը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.03.2015թ. որոշմամբ մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշման դեմ Ընկերության ներկայացրած վճռաբեկ բողոքի վարույթը ընդունելը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 15.04.2015թ. որոշմամբ:

ՎԴ/5803/05/12 վարչական գործի քննությունը ՀՀ վարչական դատարանում դեռևս չի ավարտվել:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ ՎԴՕ 95-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողը վկայակոչում է ՀՀ սահմանադրական դատարանի (ՄԴՈ-719, ՄԴՈ-922, ՄԴՈ-1074), ինչպես նաև ՄԻԵԴ-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներում արտահայտած դիրքորոշումները: Դիմողը, վերլուծելով ՄԴՈ-719 որոշումը, կատարել է հետևյալ եզրահանգումները՝ «կասեցված կամ ընդհատված վարույթների պարագայում ... Դատարանի կայացրած որոշումները կամ գործողությունները պետք է ունենան բողոքարկման հնարավորություն, ինչի պարագայում բողոքարկման ենթակա պետք է լինի գործը ողջամիտ ժամկետում չվերսկսելու կամ վերսկսելը մերժելու Դատարանի ակտերը կամ գործողությունները, ... մինչև այլ գործով վերջնական դատական ակտի կայացումը կասեցված գործի համատեքստում ենթադրում է, որ գործը պետք է վերսկսվի անկախ այլ գործով վերջնական

դատական ակտի կայացումը, եթե գործի հանգամանքների բերումով գործի քննությունն արդեն հնարավոր է դարձել առանց այլ գործով դատական ակտի ակնկալումը, որովհետև կասեցված գործի և մյուս քննվող գործերի միջև պատճառական կապը վերանում է»:

Դիմողը վկայակոչում է ՀՀ վճռաբեկ դատարանի ԵԱՔԴ/0169/02/09 որոշումը, ըստ որի՝ գործի վարույթը կասեցնելու և մեկ այլ գործի միջև պետք է լինի պատճառական փոխկապակցվածություն, մինչդեռ նույն տրամաբանությունը չի դրված գործը վերսկսելու վերաբերյալ դատական պրակտիկայում:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ ՎՊՕ 95-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ գործի վերսկսման ընդհանուր կանոնը դատական պրակտիկայում ստացել է այնպիսի նեղ ձևական մեկնաբանություն և նորմատիվ իմաստ, որ «կասեցումն առաջացրած հանգամանքների վերանալ» եզրույթը նշանակում է գործը կասեցնող դատական ակտում նշված հանգամանքը, իսկ իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված գործի կասեցումն այլևս անիմաստ և ոչ անհրաժեշտ դարձնող այլ հանգամանքների պարագայում գործի վերսկսելը բացառվում է:

4. Ըստ պատասխանողի՝ ՀՀ ՎՊՕ-ն առանձնացնում է գործի վարույթը կասեցնելու պարտադիր և ֆակուլտատիվ հիմքեր: Անկախ հիմքերի պարտադիր կամ ոչ պարտադիր լինելուց, այդ հիմքերի և վարույթի միջև պետք է լինի փոխադարձ այնպիսի կապ, որն օբյեկտիվորեն անհնարին է դարձնում գործով արդարացի և լիարժեք որոշում կայացնելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է գործի վարույթը կասեցնելու ժամկետին, ապա պատասխանողը գտնում է, որ այն որոշվում է այն հանգամանքների վերանալու պահով, որոնք արգելակում են վարույթի շարժը և դատարանը հնարավորություն չունի ի սկզբանե որոշելու վարույթի կասեցման ժամկետը:

Պատասխանողի կարծիքով՝ վարույթի կասեցման հիմքերը պետք է ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ լինեն դատարանի կողմից քննվող գործի հետ և կանխորոշիչ նշանակություն ունենան տվյալ գործի արդյունքների համար: Ավելին, վարույթի կասեցման ինստիտուտը հնարավորություն է տալիս խուսափել իրար հակասող դատական ակտերից, ինչը հետագայում նաև նշված դատական ակտերի բեկանման հիմք կարող է հանդիսանալ:

Պատասխանողը պնդում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ վիճարկվող նորմերի սահմանադրականությամբ և բացակայում է անմիջական պատճառահետևանքային կապը վիճարկվող նորմերի և դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման

փաստի միջև:

5. ՀՀ սահմանադրական դատարանը նշում է, որ դիմումի մուտքագրման պահին գործել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը և դիմողը վիճարկվող իրավադրույթը վիճահարույց է համարում Սահմանադրության այդ խմբագրությամբ 18 և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով Սահմանադրության՝ «Սահմանադրության առանձին դրույթների ուժի մեջ մտնելը» վերտառությամբ 209-րդ հոդվածը նախատեսում է Սահմանադրության 1-3-րդ գլուխների ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում Սահմանադրության փոփոխությունները հրապարակվելու հաջորդ օրվանից, այսինքն՝ 2015 թվականի դեկտեմբերի 22-ից: Որոշումը կայացնելու և հրապարակելու պահին դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներին վերաբերող՝ ՀՀ Սահմանադրության հոդվածներն են համապատասխանաբար՝ 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերը:

6. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել

«... յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանը 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին որպես պարտադիր պայման համարվող պահանջներն ինքնանպա-

տակ չեն: Դրանք կոչված են ապահովելու սահմանադրական արդարադատություն իրականացնելու սահմանադրական դատարանի պատշաճ եւ արդյունավետ գործառնության իրականացումը՝ դատարանին ձեռքազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետեւանքով դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին:

7. Սույն դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ա/ ներկայացված դիմումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

բ/ դիմողի իրավունքների հնարավոր խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմի սահմանադրաիրավական բովանդակությամբ կամ դրանց տրված որևէ կոնկրետ մեկնաբանությամբ,

գ/ դիմումով բարձրացված հարցը սահմանադրականության խնդիր չի բովանդակում, այլ առնչվում է օրենքի նորմի այնպիսի կիրառմանը, որը հանգեցրել է դատական հայեցողության սահմանների ոչ համարժեք ընկալմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «... բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:

8. Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթին համանման իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածներով:

Բոլոր դեպքերում դատարանի իրավասությանն է վերապահված գնահատելու, թե արդյոք հնարավոր է տվյալ գործի քննությունը մինչև այլ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Սակայն գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքի վերանալու հարցը պարզելիս բոլոր ատյանների դատարաններն իրենց իրավասության շրջանակներում պարտավոր են ոչ միայն ստուգել սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշման կայացված կամ դեռևս չկայացված լինելը, այլ նաև այդ որոշման բացակայության պայմաններում գործի վարույթը վերսկսելու հնարավորության հարցը, ինչը կնպաստի անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքների երաշխավորմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Բերմա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 հունվարի 2016 թվականի
ՄԴՈ-1251

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ Կ. ԲԱԼԱՅԱՆԻ
«ԲԵՐՄԱ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

ՀՀ սահմանադրական դատարանը 2016թ. հունվարի 19-ի ՍԴՈ-1251 որոշմամբ կարճել է «Բերմա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը՝ հետևյալ հիմնավորմամբ՝ ներկայացված դիմումը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, դիմողի իրավունքների հնարավոր խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմի սահմանադրաիրավական բովանդակությամբ կամ դրանց տրված որևէ կոնկրետ մեկնաբանությամբ, դիմումով բարձրացված հարցը սահմանադրականության խնդիր չի բովանդակում, այլ առնչվում է օրենքի նորմի այնպիսի կիրառմանը, որը հանգեցրել է դատական հայեցողության սահմանների ոչ համարժեք ընկալմանը:

Այդ որոշման հետ կապված ունենք հետևյալ նկատառումները.

Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2011 թվականին հարկային մարմնի կողմից «Բերմա» ՓԲԸ-ում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել է թիվ 1001329 ստուգման ակտը, որի իրավաչափությունը «Բերմա» ՓԲԸ-ն վիճարկել է ՀՀ վարչական դատարանում ՎԴ/5803/05/12 վարչական գործով: Մինևույն ժամանակ, հարկային մարմինը բռնագանձման պահանջ է ներկայացրել վարչական դատարան ՎԴ3/0314/05/12 վարչական գործով, և ՓԲԸ-ի գույքի վրա դրվել է արգելանք: Վերջինիս վարույթը «Բերմա» ՓԲԸ-ի միջնորդության հիման վրա 06.12.2012թ. ՀՀ վարչական դատարանի կողմից կասեցվել է մինչև ՎԴ/5803/05/12 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: ՎԴ3/0314/05/12 վարչական գործի վարույթը կասեցվելուց հետո «Բերմա» ՓԲԸ-ն վճարել է ստուգման ակտով առաջադրված պարտավորությունների ընդհանուր գումարը, ինչի կապակցությամբ Արտաշատի ՏՀՏ-ն 22.05.2014թ. տվել է համապատասխան տեղեկանք: «Բերմա» ՓԲԸ-ն 26.05.2014թ. միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ՎԴ3/0314/05/12 վարչական գործի վարույթը վերսկսելու, հայցի ապահովման միջոցը վերացնելու և

գործի վարույթը կարճելու վերաբերյալ: Ի պատասխան նշված միջնորդության «Բերմա» ՓԲԸ-ն ՀՀ վարչական դատարանից ստացել է 26.05.2014թ. թվակիր ՆԴԴ-9/3-Ե-151/14 գրությունն այն մասին, որ ՎԴ3/0314/05/12 գործը չի կարող վերսկսվել, քանի դեռ ՎԴ/5803/05/12 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտել, իսկ հայցի ապահովման միջոցը վերացնելու և գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություններին դատարանը կանդիդատնա գործի վարույթը վերսկսելուց հետո:

«Բերմա» ՓԲԸ-ն 08.08.2014թ. կրկին միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ՎԴ3/0314/05/12 գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ: Ի պատասխան այս միջնորդության ՀՀ վարչական դատարանը 01.09.2014թ. թվակիր ՆԴԴ-9/3-Ե-202/14 գրությամբ կրկին հայտնել է, որ դատարանը միջնորդությանը կանդիդատնա թիվ ՎԴ3/0314/05/12 գործի վարույթը վերսկսելուց հետո:

«Բերմա» ՓԲԸ-ն 02.02.2015թ. կրկին միջնորդություն է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ՎԴ3/0314/05/12 վարչական գործի վարույթը վերսկսելու մասին: ՀՀ վարչական դատարանն իր՝ 06.02.2015թ. թվակիր ՆԴԴ-9/3-Ե-21/15 գրությամբ կրկին հայտնել է, որ ՎԴ3/0314/05/12 վարչական գործի վարույթը չի կարող վերսկսվել, քանի դեռ ՎԴ/5803/05/12 վարչական գործով չկա գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: ՀՀ վարչական դատարանի 06.02.2015թ. թվակիր ՆԴԴ-9/3-Ե-21/15 գրության դեմ «Բերմա» ՓԲԸ-ն 03.03.2015թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել: Վերաքննիչ վարչական դատարանի 10.03.2015թ. որոշմամբ «Բերմա» ՓԲԸ-ի բողոքի վարույթ ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «... վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը նշված են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում, որպիսիք են գործն ըստ էության լուծող դատական ակտերը և 131-րդ հոդվածում նշված միջանկյալ դատական ակտերը: Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում սպառնիչ կերպով թվարկված են այն միջանկյալ վարչական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով, այսինքն, եթե անձը ցանկանում է օրենքով սահմանված կարգով վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքն իրացնել, ապա նա պետք է վերաքննիչ բողոք ներկայացնի այն դատական ակտի դեմ, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածում: Մինչդեռ ՆԴԴ-9/3-Ե-21/15 գրությունը նշված հոդվածով սահմանված չէ որպես բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ»: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ «Բերմա» ՓԲԸ-ն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի

15.04.2015թ. որոշմամբ:

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի նկատմամբ օրենսգրքի վիճարկվող դրույթը կիրառվել է ոչ թե դատական ակտով, այլ ՀՀ վարչական դատարանի 06.02.2015թ. թվակիր ՆԴԴ-9/3-Ե-21/15 գրությամբ, որը, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի բնորոշմամբ, հանդիսանում է «...դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման», և այդ հիմքով մերժել է վերաքննիչ բողոքի ընդունումը՝ նշելով. «...վերը նշված խախտումը բավարար հիմք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով բողոքի ընդունումը մերժելու համար»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի տրամաբանությունից հետևում է, որ ՆԴԴ-9/3-Ե-21/15 գրությունը, որպես այդպիսին, չի հանդիսանում վարչական գործով դատական ակտ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վեճն ըստ էության լուծելու դեպքում վարչական դատարանը կայացնում է վճիռ, իսկ սույն օրենսգրքով սահմանված դեպքերում՝ որոշում: Վերը նշված իրավանորմերի, ինչպես նաև օրենսգրքի մյուս հոդվածների վերլուծությունը վկայում է այն մասին, որ վարչական գործով կայացվող դատական ակտերը լինում են երկու տեսակի՝ վճիռ և որոշում: Տվյալ դեպքում ՀՀ վարչական դատարանի 06.02.2015թ. թվակիր ՆԴԴ-9/3-Ե-21/15 գրությունը, որով վկայակոչվել է վիճարկվող իրավանորմը, չի հանդիսանում ոչ վճիռ, ոչ էլ որոշում, հետևաբար՝ նաև դատական ակտ: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի տրամաբանությունից հետևում է, որ միջնորդությունները քննարկվում են դատական նիստի ընթացքում և քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, այսինքն՝ միջանկյալ դատական ակտ:

Ստացվում է, որ վերադաս դատարանը՝ նկատելով ստորադաս դատարանի կողմից թույլ տրված խախտումը, չի բեկանել գործը, չի նշել, որ այդ ակտն օրենքով չնախատեսված ակտ է, այլ այդ ակտը բնորոշել է որպես բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև այն հարցին, թե ինչու առաջին ատյանի դատարանի դատավորը միջնորդությունը չի քննարկել դատական նիստում և քննարկման արդյունքում կայացրել ոչ թե միջանկյալ դատական ակտ, ինչպես սահմանված է օրենքով, այլ միջնորդությունը մերժել է գրությամբ: Արդյունքում՝ վերադաս դատարանը չի պահպանել նաև վերադաս ատյանի դատարանների կողմից ստորադաս ատյանի դատարանների ընդունած ակտերը վերացնելու իր պարտականությունը: Դատարանի կողմից անգործության ցուցաբերումը խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար

ոչ մատչելի: Կայացնելով օրենքով չնախատեսված ակտ՝ ոչ վարչական, ոչ էլ դատական, դատարանը դիմողին զրկել են ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված դատարանի մատչելիության իրավունքից:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում (մասնավորապես՝ ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-673, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-780, ՍԴՈ-873, ՍԴՈ-936, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1190) բազմիցս անդրադարձել է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածությանը և ապահովմանը և նշել. «Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (ՍԴՈ-1037):

Դատական գործընթացի արդյունքում սահմանափակվել է նաև դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված (հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք) իրավունքը:

Ինչ վերաբերում է գործը կարճելուն, նշենք՝ քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածը սահմանում է, որ միջնորդությունների քննարկման արդյունքում դատարանը կայացնում է որոշում, այսինքն՝ դատական ակտ, ուստի այդ որոշումը պետք է ընդունել որպես դատական ակտ՝ անկախ այն հանգամանքից, թե դատավորը ինչպես է վերնագրել այդ ակտը: Եվ քանի որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան», ուստի ՀՀ սահմանադրական դատարանը պետք է կայացնեք որոշում, որով և գնահատական կտար արատավոր իրավակիրառական պրակտիկային: Արդյունքում՝ պաշտպանված կլինեին անձի՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված իրավունքները, և մարդն իր իրավունքների պաշտպանությունը կիրականացնեք Հայաստանի Հանրապետությունում և ստիպված չէր լինի դիմել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ատյաններին, մասնավորապես՝ ՄԻԵԴ:

Կ.Բալայան
03.02.2016թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 244-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

26 հունվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

դիմողի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը վերոհիշյալ դիմումով սույն գործով վիճարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ իր դիրքորոշումները ներկայացրել էր ՀՀ Սահմանադրության 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով 2-րդ գլխի դրույթների շրջանակներում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի հունվարի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացրել լրամշակված դիմում՝ հստակեցնելով սույն գործով վիճարկվող ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ իր դիրքորոշումները՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության գործող (2015 թվականի դեկտեմբերի 22-ից ուժի մեջ մտած) 2-րդ գլխի դրույթներին համապատասխան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2003 թվականի ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից:

ՀՀ քրեական օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը» վերտառությամբ 244-րդ հոդվածը սահմանում է.

«Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից սույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Վիճարկվող հոդվածը փոփոխության է ենթարկվել 2006 թվականի

հունիսի 1-ի ՀՕ-119-Ն ՀՀ օրենքով:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածն առաջացնում է սահմանադրականության խնդիր և խնդրում է որոշել հիշյալ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 65-րդ և 66-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Դիմողի կարծիքով՝ «վիճարկվող նորմի ձևակերպումից և տառացի մեկնաբանությունից հետևում է, որ դրա իրական նպատակը ոչ թե պատահարից տուժած անձանց պաշտպանությունը և/կամ վերջինիս օգնությունն ցույց տալն է, այլ՝ իրավապահ մարմիններին օժանդակելը ճանապարհատրանսպորտային դեպքը քննելու հարցում»:

Ըստ դիմողի՝ վիճարկվող հոդվածը ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ մեղավոր անձին պարտադրում է, նախևառաջ, հենց դեպքի վայրում գիտակցել և ընդունել իր մեղավորությունը, այնուհետև՝ չհեռանալ դեպքի վայրից: Այսինքն՝ վիճարկվող նորմը ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցներին պարտադրում է գործել իրենց սեփական մեղավորության կանխավարկածից ելնելով, քանի որ պատահարի պահին ու անմիջապես դրանից հետո (հատկապես՝ վիճահարույց դեպքերում) ոչ ոք չի կարող վստահ լինել, թե, ի վերջո, ով կարող է այդ պատահարի մեղավոր կողմ ճանաչվել:

Ի հիմնավորումն իր դիրքորոշումների, դիմողը վկայակոչում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում լռելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի, անմեղության կանխավարկածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումներ, ինչպես նաև խնդրո առարկա հարցի վերաբերյալ մի շարք օտարերկրյա պետությունների սահմանադրական արդարադատության մարմինների արտահայտած իրավական դիրքորոշումներ: Դիմողը վկայակոչում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի (ԵԱՆԴ/0122/01/12) որոշմամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը պայմանավորված է տուժողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ և, մասնավորապես, հետապնդում է պատժի սպառնալիքով հարկադրել ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցներին չհեռանալ և անհրաժեշտ օգնություն ցուցաբերել պատահարի արդյունքում տուժած անձանց:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի իրավական բովանդակությունն ամբողջապես ընկալելու համար հարկ է անդրադառնալ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքին (մասնավորապես՝ 24-րդ հոդված), որով սահմանվում են տրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարորդների պարտականությունները:

Անդրադառնալով Ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները խախտած անձանց ցուցմունք տալու պարտականությանը և քրեական հետապնդման սպառնալիքի ներքո հայտնվելու վտանգին՝ պատասխանող կողմը նշում է, որ օրենքը չի պարտադրում երթևեկության կանոնները խախտած անձին ցուցմունքներ տալ: Ավելին, ինչպես ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը ոչ միայն կասկածյալին, այլև վկային իրավունք է վերապահում հրաժարվել իր դեմ ցուցմունք տալուց, եթե դրա հետևանքով անձը կարող է հայտնվել քրեական հետապնդման սպառնալիքի ներքո: Իսկ վկայություն տալուց հրաժարվելու իրավունքը գործում է նաև այն դեպքում, երբ այդպիսի վկայությունը ոչ միայն ուղղակիորեն, այլև անուղղակիորեն կարող է անձին վկայի կարգավիճակից վերածել կասկածյալի:

Պատասխանող կողմի կարծիքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

4. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները և ելնելով սույն գործով դիմողի փաստարկներից և եզրահանգումներից, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ա) վիճարկվող իրավակարգավորման իրավական նպատակները և հիմքերը,

բ) Ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների շրջանակը,

գ) վիճարկվող իրավակարգավորման պարագայում ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխավորվածությունը և ապահովումը:

5. ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի խնդիրներն են՝ հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա

միջավայրը, հասարակական կարգը և անվտանգությունը, սահմանադրական կարգը, խաղաղությունը և մարդկության անվտանգությունը, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Այդ խնդիրների իրականացման համար ՀՀ քրեական օրենսգիրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներն ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար (ՀՀ քրեական օրենսգրքի 2-րդ հոդված): ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասով սահմանվում է նաև պատժի նպատակը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մաս):

Օրենսդիրը, արարքի հանրային վտանգավորության գնահատման և դրա քրեականացման իր իրավասության շրջանակներում, ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ խնդիրներից և նպատակներից, սույն գործով վիճարկվող հոդվածն ամրագրել է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 23-րդ գլխում: Հիշյալ կանոնակարգմամբ տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը համարելով հանցագործություն՝ օրենսդիրն այդ արարքը՝ որպես այդպիսին որակելը պայմանավորում է ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը» վերտառությամբ 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների պարտադիր վրա հասնելու հանգամանքով: Այդ հետևանքներն են՝ մարդու առողջությանն անգգուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը, անգգուշությամբ մարդու մահ առաջացնելը, անգգուշությամբ երկու կամ ավելի մարդու մահ առաջացնելը:

Վիճարկվող իրավակարգավորմամբ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը չթողնելու իրավական պահանջ սահմանելը, ինչպես փաստում է սույն գործով պատասխանող կողմը, նպատակաուղղված է տուժողների իրավունքների պաշտպանությանը և պայմանավորված է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով նախատեսված տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման անհրաժեշտությամբ:

Վերոշարադրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ հիմնավոր չէ դիմողի այն փաստարկը, որ «... օրենսդիրը ճանապարհատրանսպորտային վայրը թողնելու համար քրեական պատաս-

խանատվություն նախատեսելիս նպատակ է հետապնդել տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձանց քրեական պատժի սպառնալիքի տակ պարտավորեցնել մնալ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում՝ բացառապես իրավապահ մարմիններին օժանդակություն ցուցաբերելու նպատակով»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես, «Տրանսպորտային միջոցների սեփականատերերի և վարորդների հիմնական պարտականությունները» վերտառությամբ 24-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է.

«դ) ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում՝

1) անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված կարգով միացնել վթարային լուսային ազդանշանը և չտեղաշարժել ինչպես տրանսպորտային միջոցը, այնպես էլ վթարի հետ կապված առարկաները (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում հետվթարային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է միացված լինեն նաև օգնության համար դեպքի վայրին անմիջապես մոտ կանգնեցված տրանսպորտային միջոցների վթարային լուսային ազդանշանները):

2) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու, «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն կանչելու համար, իսկ ծայրահեղ դեպքերում՝ համընթաց շարժվող կամ իր տրանսպորտային միջոցով տուժածներին մոտակա բուժօգնության տեղափոխել, այնտեղ հայտնել իր ազդանունը, տրանսպորտային միջոցի գրանցման համարանիշը (ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական իրավունքի վկայական և տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր), որից հետո վերադառնալ պատահարի վայր:

3) սույն հոդվածի չորրորդ մասով սահմանված կարգով ազատել երթևեկելի մասը, եթե մյուս տրանսպորտային միջոցների երթևեկությունը խոչընդոտված է.

4) պատահարի մասին հայտնել ոստիկանություն և սպասել ոստիկանության ծառայողների ներկայանալուն»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժողներ չկան, ապա վարորդները, պատահարի իրավիճակի գնահատման փոխհամաձայնությամբ, կարող են նախօրոք կազմել ու ստորագրել վթարի սխեման, ներկայանալ

մոտակա ճանապարհապարեկային ծառայության պահակետ կամ ոստիկանության տարածքային մարմին՝ պատահաբար սահմանված կարգով ձևակերպելու համար»:

Վերոհիշյալ իրավակարգավորումից հետևում է, որ օրենսդիրը ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների մեջ, ի թիվս այլնի, ընդգրկել է ոչ միայն իրավապահ մարմինների հետ փոխհարաբերություններով պայմանավորված պարտականությունները, այլ նաև տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենսդրությունը խախտող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով»:

Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 1246-րդ հոդվածով սահմանվում է վարչական պատասխանատվություն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելու, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն կամ ճանապարհատրանսպորտային պատահար, պատահարի մասնակից վարորդի կողմից պարտականությունները չկատարելու համար: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 3-րդ մասով վարչական պատասխանատվություն է սահմանվում ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պարտականությունները չկատարելու համար, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ:

Ճանապարհային երթևեկության վերաբերյալ ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, հիշյալ օրենքով սահմանվող համանման իրավակարգավորումներով գործել է նաև ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները հաստատելու մասին» N 924-Ն որոշումը:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի (ԵԱՆԴ/0122/01/12) որոշմամբ: Հիշյալ որոշման, մասնավորապես, 18-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանը նշում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը նպատակ է հետապնդում պատժել

ճանապարհային երթևեկության կանոնների խախտում թույլ տված այն անձանց, ովքեր, թողնելով դեպքի վայրը, խուսափել են ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժած անձանց օգնություն ցուցաբերելուց, չեն ցանկացել ճանապարհատրանսպորտային պատահարի մասին տեղեկացնել իրավապահ մարմիններին և աջակցել կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանը»: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի համար կատարված արարքի, դրա հետևանքների հետ կապված հանգամանքների բացահայտմանն աջակցելու պարտականություն և այն չկատարելու համար պատասխանատվություն օրենքով սահմանված չեն: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հանցագործության բացահայտմանն աջակցելը համարվում է որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Հետևաբար, իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ բացառի օրենսդրական կանոնակարգումից դուրս անձի վրա պարտականություն և որպես հետևանք՝ այն չկատարելու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը:

Վերոհիշյալի վերլուծության արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելը պայմանավորված է ճանապարհային երթևեկության մասնակիցների, մասնավորապես, տուժած անձանց շահերի պաշտպանության, ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում տրանսպորտային միջոցի վարորդի պարտականությունների կատարման ապահովման անհրաժեշտությամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի համար քրեական պատասխանատվություն սահմանելով՝ պետությունն իրացնում է, մասնավորապես, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության իր սահմանադրական պարտականությունը:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից, հետագա օրենսդրական զարգացումների ընթացքում, սույն գործով վիճարկվող հոդվածով նախատեսված արարքի քրեականացման քաղաքականության պահպանման դեպքում, տարաբնույթ մեկնաբանությունները բացառելու համար անհրաժեշտ կլինի է՛լ ավելի բարձրացնել իրավակարգավորման իրավական որոշակիության և իրավական կանխատեսելիության մակարդակը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով) 65-րդ և 66-րդ հոդվածներով:

ՀՀ Սահմանադրության «Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը» վերտառությամբ 65-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»:

ՀՀ Սահմանադրության «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 66-րդ հոդվածը սահմանում է, որ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքները համանման կարգավորմամբ ամրագրված էին նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 21-րդ և 22-րդ հոդվածներով:

Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի իրավունքներն ուղղակի կամ անուղղակի ամրագրված են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում են անմեղության կանխավարկածի իրավունքը: Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Saunders v. The United Kingdom* (Application no. 19187/91) գործով իր 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճռում արտահայտել է այն դիրքորոշումը, համաձայն որի՝ թեև լռելու իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածում հիշատակված չեն, այնուամենայնիվ, դրանք հանդիսանում են հանրաճանաչ միջազգային չափորոշիչներ, որոնք ընկած են արդար դատական ընթացակարգի հիմքում: Նույն վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև եզրահանգել է, որ լռելու իրավունքը սերտ փոխկապակցված է անմեղության կանխավարկածի հետ:

ՀՀ սահմանադրական դատարանը ևս իր որոշումներում անդրադարձել է ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորվածության և ապահովման խնդիրներին: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել իր՝ 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշման մեջ արտահայտած, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը.

«... անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիքավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքներն օրենսդիրն ապահովել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, մասնավորապես՝ «Անմեղության կանխավարկածը» վերտառությամբ 18-րդ հոդվածով և «Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը» վերտառությամբ 20-րդ հոդվածով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում են վերոհիշյալ իրավունքների իրացման ապահովման այլ երաշխիքներ ևս: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ցուցմունքներ տալը կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելը, բացատրություններ տալը կամ բացատրություններ տալուց հրաժարվելն ամրագրվել են որպես կասկածյալի (63-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետեր) և մեղադրյալի (65-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 7-րդ կետեր) իրավունքներ: Բացի դրանից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է կասկածյալին (211-րդ հոդվածի 3-րդ մաս) և մեղադրյալին (212-րդ հոդվածի 8-րդ մաս) նրանց իրավունքները՝ ներառյալ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունքը, հարցաքննությունն սկսելուց առաջ քննիչի կողմից բացատրելու, ինչպես նաև վկային իր, ամուսնու կամ իր մերձավոր ազգականների դեմ չվկայելու իր իրավունքի մասին առերեսման սկզբում քննիչի կողմից նախազգուշացնելու (216-րդ հոդվածի 2-րդ մաս) և իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ վկայելուց հրաժարվելու նրա իրավունքը հարցաքննությունից առաջ նախազառնակի կողմից պարզաբանելու (339-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ) իրավական պահանջները:

Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ցուցմունք տալուց

հրաժարվելը» վերտառությամբ 339-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ՝ «Իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից»:

Համադրելով վերոգրյալը սույն գործով դիմողի այն եզրահանգման հետ, համաձայն որի՝ ՀՀ քրեական օրենսգրքի սույն գործով վիճարկվող 244-րդ հոդվածն «առաջացնում է սահմանադրականության խնդիր, այնքանով որքանով այն հակասում է անձի՝ իր դեմ ցուցմունք չտալու սկզբունքին, ինչպես նաև անմեղության կանխավարկածին», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ, քանի որ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխավորվածության և ապահովման անմիջական կարգավորումը դուրս է ՀՀ քրեական օրենսդրության և, բնականաբար, նաև սույն գործով վիճարկվող իրավակարգավորման առարկայի շրջանակից: Ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու և անմեղության կանխավարկածի սահմանադրական իրավունքների իրացման իրավական երաշխիքները՝ համակարգային ամբողջականության մեջ ապահովվում են ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 244-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

26 հունվարի 2016 թվականի
ՍԴՈ-1252

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ Կ. ԲԱԼԱՅԱՆԻ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 244-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

ՀՀ սահմանադրական դատարանը 2016թ. հունվարի 26-ի ՍԴՈ-1252 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել վիճարկվող նորմը՝ նշված որոշման մեջ ՍԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

Այդ որոշման հետ կապված ունենք հետևյալ նկատառումները.

Վիճարկվող նորմը սահմանում է.

«Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից՝ սույն օրենսգրքի 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքների առաջացման դեպքում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

ՀՀ քրեական օրենսգրքի «Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը» վերտառությամբ 242-րդ հոդվածով նախատեսված հետևանքներն են՝ անգգուշությամբ մարդու առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը կամ մարդու մահ կամ երկու կամ ավելի մարդու մահ անգգուշությամբ առաջացնելը:

Վիճարկվող նորմն ուղղակի հղում է կատարում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածին, որն էլ իր հերթին սահմանում է, որ Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը տրանսպորտային միջոց վարող և ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտած անձի կողմից՝ առաջացնում է քրեական պատասխանատվություն, երբ անգգուշությամբ մարդու առողջությանը պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս, կամ առաջացել է մեկ կամ երկու և ավելի մարդու մահ:

Վիճարկվող նորմի վերլուծությունը վկայում է, որ Ճանապարհային

պատահարներից հետո՝ վարորդները քրեական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքով պարտավոր են մնալ դեպքի վայրում, որպեսզի դուրսացնեն պատահարի մասին օբյեկտիվ ճշմարտության բացահայտումը: Ծանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցն անմիջապես ձեռք է բերում կասկածյալի կարգավիճակ: Հանցագործության մեջ փաստացի կասկածվող անձի վրա քննությանն օժանդակելու պարտականություն դնելն իր դեմ վկայություն տալուն պարտադրելու դրսևորում է, իսկ դա հակասում է ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանված՝ իր դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքին: Իսկ ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու՝ լռելու իրավունքը ճանաչվել է ՄԻԵԴ-ի կողմից կայացված մի շարք վճիռներում և ընկած է արդարացի դատավարության հասկացության հիմքում: Մասնավորապես, լռելու և ինքն իր դեմ ցուցմունք տալու իրավունքը պետք է ուղղված լինի նրան, որ «անձը չվերածվի իր իսկ դատապարտման զենքի» (Sounders v. United Kingdom (1996), Brusco v. France (2010)):

Ստացվում է, որ մարդուն պարտավորեցնում են աջակցել իրավապահ մարմիններին՝ սահմանափակելով նրա՝ իր դեմ ցուցմունք տալուց հրաժարվելու, արժանապատվության իրավունքները՝ վարորդի վրա բարոյահոգեբանական ճնշում գործադրելով, ինչպես նաև խախտելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը: Մասնավորապես, փորձը ցույց է տալիս, որ շատ հաճախ ճանապարհատրանսպորտային պատահարներից հետո վարորդները հիմնականում գտնվում են ծանր հոգեկան հուզմունքի վիճակում և ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը լքում են չգիտակցված, և նրանց օգնություն ցույց տալու փոխարեն մեղադրում են հանցագործություն կատարելու մեջ:

Կարող են լինել դեպքեր, երբ անձը ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը լքում է զուտ այն պատճառով, որ իրեն տվյալ պատահարի մեջ մեղավոր չի համարում: Ստացվում է, որ վիճարկվող նորմը ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակցին պարտադրում է, նախնառաջ, հենց դեպքի վայրում գիտակցել և ընդունել իր մեղավորությունը, այնուհետև՝ չհեռանալ դեպքի վայրից:

Ծանապարհատրանսպորտային պատահարի պահին ոչ միշտ է հնարավոր անմիջապես գնահատել, թե արդյոք վարորդը կատարել է ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտում, թե ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել այլ պատճառով: Ծանապարհատրանսպորտային պատահարներից հետո է միայն հնարավոր պարզել, այն էլ հատուկ գիտելիքների օգտագործմամբ (տարատեսակ փորձաքննություններ, քննչական գործողություններ...), որ վարորդը խախտել է ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցի շահագործման

կանոնները, թե՛ ոչ: Այսինքն՝ այդ պահին անձը չի կարող համոզված լինել այն հարցում, որ իրավախախտում կատարվել է, թե՛ ոչ: Ստացվում է, որ սահմանափակվում է անմեղության կանխավարկածը, այսինքն՝ ոչ թե իրավապահ մարմիններն են ապացուցում նրա մեղավորությունը, այլ անձին համարում են մեղավոր ճանապարհատրանսպորտային պատահարի և վրա հասած հետևանքի փաստի ուժով:

Հանրահայտ է, որ միջազգային պայմանագրերը և ՄԻԵԴ-ի վճիռները գերակայություն ունեն ներպետական օրենսդրության նկատմամբ, և ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշմամբ անտեսել է նաև ՄԻԵԴ-ի վճիռը, որում մասնավորապես ՄԻԵԴ-ը նշում է. «Անմեղության կանխավարկածի սկզբունքը նախատեսում է, որ մեղքի ապացուցման պարտականությունը ամբողջությամբ դրված է դատախազության վրա և ցանկացած կասկած պետք է օգտագործվի ի օգուտ մեղադրյալի» (Barbera, Messegue and Jabardo v. Spain (1988)): Ստացվում է, որ վիճարկվող նորմը հակասում է վերոնշյալ նախադեպերին, ըստ որոնց՝ անձի վրա դրվում է իր անմեղությունն ապացուցելու պարտականություն:

Հետևաբար, վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 3, 65 և 66-րդ հոդվածներին և ՄԻԵԴ-ի նախադեպերին:

Կ.Բալայան
09.02.2016թ.



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 53-
ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ
ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ, 57-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա.
Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհան-
նիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողո-
վի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր
մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության
100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահ-
մանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատա-

խազի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 2015թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 20.10.2015թ. ՍԴԱՌ-61 աշխատակարգային որոշմամբ որոշել է ՀՀ գլխավոր դատախազի՝ վերը նշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Դատախազի լիազորությունները մինչդատական վարույթում» վերտառությամբ 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ ... հարուցել և իրականացնել քրեական հետապնդում, վերացնել քննիչի կայացրած որոշումը քրեական գործը կարճելու մասին, դատարանի միջնորդության հիման վրա հարուցել քրեական գործ, վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ»:

Նույն հոդվածի նույն մասի 3-րդ կետը սահմանում է. «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝ ... հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապարաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետն ամրագրում է. «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ... ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին

օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից»:

Նույն մասի 2-րդ կետը նախատեսում է. «Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական դեկլարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ... ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից պահանջել նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր և քննության ընթացքի մասին տեղեկություններ, ինչպես նաև ծանոթանալ դրանց կամ դրանք ստուգել նրանց գտնվելու վայրում»:

Օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է. «Հետաքննության մարմինը՝ ... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին»:

Վիճարկվող դրույթներից 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հունիսի 20-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 8-ին: Նշված օրենքով ՀՀ Ազգային ժողովն օրենսգրքի 53-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետը լրացրել է «ինչպես նաև իր նախաձեռնությամբ հարուցել քրեական գործ» բառերով:

Վիճարկվող մյուս դրույթները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից ի վեր փոփոխությունների կամ լրացումների չեն ենթարկվել:

2. Թիվ 61202415 քրեական գործի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. որպես քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթ 2015 թվականի ապրիլի 13-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ն. Միսակյանի 2015 թվականի ապրիլի 9-ի 36/15-15 թվակիի զեկուցագիրը:

Հիշյալ զեկուցագրով ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետն ըստ էության հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության՝ հետաքննության մարմնի լիազորությամբ օժտված պաշտոնատար անձինք չեն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված պար-

տականությունը, այն է՝ հայտնաբերված հանցագործության մասին անհապաղ տեղյակ չեն պահել դատախազին, ինչի արդյունքում դատախազը զրկվել է կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումները հետաքննության մարմնի կողմից ընդունելու, գրանցելու և լուծելու մասին օրենքի պահանջների կատարումը ստուգելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված բացառիկ լիազորությունն իրացնելու հնարավորությունից:

Մասնավորապես, ըստ զեկուցագրի՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունից ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել է «Հով-Գրիգ Շին» ՍՊ ընկերության վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2015 թվականի փետրվարի 25-ի որոշման պատճենը՝ օրինականությունն ստուգելու համար:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2015 թվականի ապրիլի 18-ին կայացվել է հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2015 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2015 թվականի ապրիլի 18-ին կայացված որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ պաշտոնեական անփութության դեպքի առիթով հարուցվել է թիվ 61202415 քրեական գործը:

2015 թվականի հուլիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202415 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի հուլիսի 31-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ին կայացրած որոշումը:

2015 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202415 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ

հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի օգոստոսի 27-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը:

Թիվ 61202715 քրեական գործի առնչությամբ սույն գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. որպես քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթ 2014 թվականի հոկտեմբերի 22-ին ՀՀ հատուկ քննչական ծառայություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Բ. Պետրոսյանի 2014 թվականի հոկտեմբերի 21-ի 36/15-14 թվակիր զեկուցագիրը:

Հիշյալ զեկուցագրով ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալն ըստ էության հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության՝ հետաքննության մարմնի լիազորությամբ օժտված պաշտոնատար անձինք չեն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված պարտականությունը, այն է՝ հայտնաբերված հանցագործության մասին անհապաղ տեղյակ չեն պահել դատախազին, ինչի արդյունքում դատախազը զրկվել է կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումները հետաքննության մարմնի կողմից ընդունելու, գրանցելու և լուծելու մասին օրենքի պահանջների կատարումը ստուգելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված բացառիկ լիազորությունն իրացնելու հնարավորությունից:

Մասնավորապես, ըստ զեկուցագրի՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության պետի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 10903/13-14 գրությամբ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն է ուղարկվել մաքսային միջնորդ Մարտին Հակոբի Ավետիսյանի վերաբերյալ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 9-ի որոշման պատճենը՝ օրինականությունն ստուգելու համար:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործու-

նեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2014 թվականի նոյեմբերի 10-ին կայացվել է հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից կայացված 2015 թվականի մայիսի 11-ի որոշմամբ վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի կողմից 2014 թվականի նոյեմբերի 10-ին կայացված որոշումը և ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով՝ պաշտոնեական անփութության դեպքի առիթով հարուցվել է թիվ 61202715 քրեական գործը:

2015 թվականի հուլիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202715 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի հուլիսի 31-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի հուլիսի 24-ին կայացրած որոշումը:

2015 թվականի օգոստոսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազությունում մուտքագրվել են թիվ 61202715 քրեական գործով քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը և քրեական գործը:

Նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2015 թվականի օգոստոսի 27-ին կայացված որոշմամբ, ապօրինի լինելու պատճառաբանությամբ, վերացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության վարչության պետի տեղակալի 2015 թվականի օգոստոսի 19-ի որոշումը:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները հակասում են 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 5-րդ մասին, 103-րդ հոդվածին:

Ըստ դիմողի՝ օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» դրույթները պայմաններ ամրագրող նորմեր չեն, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ

պարբերությունը վերաբերում է պայմաններ ամրագրող նորմերին: Հետևաբար՝ հետաքննության մարմինը պարտավոր է դատախազին տեղյակ պահել ոչ միայն գործով սկսված հետաքննության մասին, այլ նաև՝ հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության մասին: Մինչդեռ իրավակիրառական պրակտիկայում օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» դրույթներն ընկալվում են որպես «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա պայմաններ ամրագրող նորմեր, դրանք մեկնաբանվում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոններով, ինչի արդյունքում օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում ամրագրված դրույթներն ստանում են այլ իմաստ: Արդյունքում, ըստ իրավակիրառական պրակտիկայի՝ հետաքննության մարմինը պարտավոր է դատախազին անհապաղ տեղյակ պահել հայտնաբերված հանցագործության մասին միայն գործով հետաքննություն սկսելու պարագայում:

Դիմողն արձանագրում է, որ օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ հայտնաբերված հանցագործության մասին դատախազին տեղյակ պահելու պարտականությունը սահմանող դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, դատախազին հնարավորություն չի տալիս մինչև հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելը /հետաքննություն սկսելը/ իրացնելու հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության դեպքի վերաբերյալ նախապատրաստված նյութերի հիման վրա ինքնուրույնաբար քրեական գործ հարուցելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը, հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության դեպքի վերաբերյալ նյութերի նախապատրաստումը քննիչին հանձնարարելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված լիազորությունը, կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումները հետաքննության մարմնի կողմից ընդունելու, գրանցելու և լուծելու մասին օրենքի պահանջների կատարումը ստուգելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված լիազորությունը, ինչպես նաև հետաքննության մարմնի կողմից հայտնաբերված հանցագործության դեպքի վերաբերյալ նյութերը ստուգման համար պահանջելու կամ դրանց ծանոթանալու կամ դրանք ստուգելու իրենց գտնվելու վայրում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված լիազորությունը:

Վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 5-րդ մասին և 103-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ իր դիրքորոշումները հիմնավորելու համար դիմողը մեջ է բերում Տ. Քամայանի վերաբերյալ գործով 2010 թվականի մարտի 26-ի թիվ ԵՇԴ/0097/01/09 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի հայտնած իրավական դիրքորոշումը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ Եվրոպական դատարանի պրակտիկայի վերլուծությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածները, Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով և Բեկուր և Կուտրոպուլոսն ընդդեմ Հունաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1985 թվականի նոյեմբերի 29-ի՝ «Հանցագործության և իշխանության չարաշահման գոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքները» A/RES/40/34 հռչակագրում և Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 1985 թվականի հունիսի 28-ի՝ «Քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժածի կարգավիճակի մասին» R(85)11 հանձնարարականում տուժողների իրավունքների պաշտպանության համար ազգային մակարդակներով միջոցներ ձեռնարկելու առաջարկվող մոտեցումները:

4. Պատասխանող կողմը պնդում է, որ դատախազության լիազորությունների օրենսդրական ամրագրումն ու կարգավորումն առաջին հերթին իրականացվել է այն հաշվով, որ երաշխավորվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված նպատակների իրականացումը: Այդ պատճառով օրենսդիրը դատախազությանը վերապահել է այնպիսի լիազորություններ, որոնք թեն դուրս են գալիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ նախնական քննություն կոչվող փուլի շրջանակներից, բայց անհրաժեշտաբար ապահովում են դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակից բխող սոցիալ-իրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունը վկայում է, որ դատախազական հսկողությունն սկսվում է քրեական գործի հարուցման փուլից, այս փուլի օրինականությունից է կախված քրեական դատավարության խնդիրների իրականացումը՝ անձի, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Քրեական գործի հարուցման օրինականության նկատմամբ դատախազության հսկողական լիազորություններից է կատարված կամ նախա-

պատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հետաքննության մարմնի կողմից հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարման ստուգումը:

Հղում կատարելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» 2000թ. դեկտեմբերի 6-ի թիվ Rec(2000)19 հանձնարարականին, ՄԱԿ-ի կողմից 1990թ. ընդունված՝ «Դատախազների դերի վերաբերյալ ղեկավար սկզբունքներին», Դատախազների միջազգային ասոցիացիայի կողմից 1993թ. ապրիլի 23-ին ընդունված՝ «Դատախազների մասնագիտական պատասխանատվության չափորոշիչների, հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» փաստաթղթին՝ պատասխանողը գտնում է, որ դրանք ելակետային նշանակություն ունեն ներպետական օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի ձևավորման համար:

Պատասխանող կողմը նաև նշում է, որ դիմողի կողմից առաջ քաշված խնդիրն իրավական լուծում է ստացել ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ գտնվող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի իրավակարգավորումներում: Նոր օրենսգրքի նախագծում նախատեսվում է վերացնել քրեական գործի հարուցման փուլը՝ այն ներառելով նախաքննության փուլի մեջ: Քրեական վարույթն սկսվում է հանցագործության մասին հաղորդում ստանալու պահից և ավարտվում քրեական վարույթը դատարան ուղարկելով կամ այն կարճելով:

Ամփոփելով՝ պատասխանողը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, քանի որ դրանք կոչված են ապահովելու հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողական լիազորությունների իրականացումը, հանցավոր ոտնձգություններից անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

5. Սահմանադրական դատարանը նշում է, որ դիմողի ներկայացրած երկու դիմումների հիման վրա գործերը քննության ընդունելու պահին գործել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, և դիմողը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները վիճահարույց է համարում այդ խմբագրությամբ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, 20-րդ հոդվածի 5-րդ մասի և 103-րդ հոդվածի տեսանկյունից:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության՝

ա/ 18-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը տեղ է գտել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում,

բ/ 103-րդ հոդվածը շարունակում է գործել՝ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 209-րդ հոդվածի 6-րդ մասի:

6. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նախ անդրադառնալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությանը՝ նկատի ունենալով, որ դրանց կատարվող հղումներն են հիմք ծառայել վեճի առարկա նորմերն իրավակիրառ պրակտիկայում տարակերպ մեկնաբանելու հարցում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ «Իրավական ակտի մեկնաբանումը» վերտառությամբ 86-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Նույն օրենքի՝ «Օրենսդրական տեխնիկայի այլ կանոններ» վերտառությամբ 45-րդ հոդվածի 10-րդ կետի 1-3-րդ պարբերությունների համաձայն. «Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմանների առկայությունը պարտադիր է, չի կարող կիրառվել «կամ» շաղկապը: Այս դեպքում պետք է կիրառվեն «և» կամ «ու» շաղկապները:

Այն պայմանների թվարկման ժամանակ, երբ բոլոր թվարկված պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով: Այս դեպքում պետք է կիրառվի «կամ» շաղկապը:

Եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի 1-3-րդ պարբերությունների դրույթների վերլուծությունից բխում է, որ դրանք վերաբերում են բացառապես պայմաններ ամրագրող նորմերին: Այսինքն այն դեպքերին, երբ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է լինում «և» կամ «ու» շաղկապով բաժանված միաժամանակյա դերակատարություն ունեցող և իրավակարգավորման նպատակի

իրացումը երաշխավորող պայմաններին:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ օրենսդրության մեջ, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, առկա են «և» շաղկապով տարանջատված տարաբնույթ իրավական նորմեր, որոնցից ոչ բոլորն են ամրագրում տվյալ նորմի կիրառման միաժամանակյա անհրաժեշտ պայմանները: Դրանք կարող են, ի թիվս այլնի, լինել նորմ-սկզբունքներ, նորմ-նպատակներ, նորմ-խնդիրներ, ինչպես նաև կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող այնպիսի նորմեր, որոնք չեն ամրագրում որևէ պայման, կամ որ նույնն է՝ տվյալ նորմի կիրառումը չեն պայմանավորում պայմանների համակցությամբ: Այդպիսի կոնկրետ կարգավորիչ նշանակություն ունեցող նորմերից է, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի նորմը, որը, ի թիվս այլնի, պարունակում է հետևյալ դրույթները. «հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ», «բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումներ»:

Վերը նշված առաջին դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կոնկրետ հանցագործության դեպքի առիթով ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը հնարավոր չի համարում միաժամանակ իրականացնել հետաքննություն և նախաքննություն, քանի որ, որպես կանոն, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության՝ հետաքննությունը նախորդում է նախաքննությանը:

Վերը նշված երկրորդ դրույթի առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը պարտադիր չի համարում, որ կոնկրետ քրեական գործով առաջին ատյանի դատարանը միաժամանակ կայացնի և՛ դատավճիռ, և՛ այլ վերջնական որոշում: Ընդհանուր կանոնն այն է, որ կոնկրետ քրեական գործով առաջին ատյանի դատարանը կայացնում է դատավճիռ, իսկ վերադաս դատարանները՝ որոշում /միաժամանակ և՛ դատավճիռ, և՛ այլ վերջնական որոշում կայացնելու դեպքը նախատեսված է օրենսգրքի 360.1 հոդվածով և վերաբերում է դատարանի լրացուցիչ որոշմանը, որը կայացվում է դատավճռի կամ որոշման հետ միաժամանակ/:

Վերը նշված առաջին և երկրորդ դրույթների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դրանք սահմանում են համապատասխանաբար՝ դատախազական հսկողության և դատախազի այլ գործառույթների բնագավառները և դատախազի լիազորությունների իրականացումը պայմանավորում են համապատասխան դեպքի, փաստի կամ իրադարձության առկայությամբ: Այդ դրույթներից յուրաքանչյուրում «և» շաղկապից առաջ և հետո ամրագրված են երկու համագործակցող, սակայն միմյանցից անկախ հասկացություններ, որոնք ենթադրում են դատա-

խազի լիազորությունների իրականացման երկու ինքնուրույն, միմյանցից անջատ նախադրյալներ, երբ դիտարկվող դրույթների կիրառման համար բավական է «և» շաղկապից առաջ և հետո ամրագրված դեպքերից առնվազն մեկի առկայությունը: Այսինքն՝ վերը նշված օրինակում, եթե տվյալ կոնկրետ գործով ընթանում է հետաքննություն, ապա դատախազը հսկողություն է իրականացնում հետաքննության նկատմամբ, եթե ընթանում է նախաքննություն, ապա դատախազը հսկողություն է իրականացնում նախաքննության նկատմամբ, եթե տվյալ կոնկրետ գործով առկա է միայն դատավճիռ, այլ ոչ թե բողոքարկման ենթակա այլ վերջնական դատական ակտ, ապա դատախազն իրավասու է բողոքարկել դատավճիռը, անկախ նրանից, թե տվյալ գործով առկա է, արդյոք, բողոքարկման ենթակա այլ վերջնական դատական ակտ, թե՛ ոչ:

Իրավական նորմի մեկնաբանությունը պետք է շաղկապել ինքնուրույն գործառնության առկայության և դրա իրացման պայմանների հետ, այլ ոչ թե դրսևորել մեխանիկական մոտեցում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ «... դատախազի բացառիկ լիազորությունն է՝ ... ստուգել կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարումը հետաքննության մարմնի կողմից»: Ինքնուրույն լիազորության իրականացումը չի կարող պայմանավորվել այլ լիազորությամբ պայմանավորված իրավակարգավորման օբյեկտի միաժամանակյա առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված կանոնները կիրառելի չեն ինքնուրույն իրավակարգավորման օբյեկտների թվարկումների նկատմամբ և վեճի առարկա դրույթում ներկայացված չէ կոնկրետ իրավահարաբերությանը վերաբերող երկու միաժամանակյա անհրաժեշտ պայմանների առկայության պահանջ: Նույնը վերաբերում է նաև օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դրույթին /վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին/: Որպես օրինակ կարող է ծառայել նաև օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը /քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ/: Այս դեպքում, ըստ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ քննիչը չի կարող հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր, քանի դեռ տվյալ հանցագործության առիթով առկա չէ հարուցված քրեական գործ, կամ քննիչը պարտավոր է հանցագործության դեպքով նախապատրաստված նյութերի հիման վրա անպայման հարուցել քրեական գործ՝ անկախ

նրանից, որ առկա են քրեական գործի հարուցումը մերժելու հիմքեր:

Բացի դրանից, օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման համար պետք է այն ներկայացնել իր իրավական բովանդակության ամբողջականության մեջ, դիտարկել օրենսգրքի այլ դրույթների հետ օրգանական փոխկապվածության համատեքստում: Խոսքը վերաբերում է օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերին: Դրանցով սահմանված լիազորությունները ենթադրում են կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների և այլ դեպքերի մասին անհապաղ դատախազին տեղյակ պահելու հետաքննության մարմնի պարտականության կատարում՝ անկախ տվյալ գործով հետաքննություն սկսելու կամ չսկսելու հանգամանքից: Դիտարկվող պարտականությունը չկատարելը կամ այդ պարտականությունը գործով հետաքննություն սկսելու հանգամանքով պայմանավորելը կխաթարի հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դատախազական հսկողության էությունը, կխոչընդոտի դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված լիազորությունների իրականացմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթներն իրավակիրառական պրակտիկայում սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների հիման վրա մեկնաբանելու և կիրառելու պայմաններում կարող են ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածին համահունչ լիարժեք երաշխավորել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին հետաքննության մարմնի կողմից օրենքի պահանջների կատարման ստուգման՝ դատախազի լիազորությունների բնականոն և արդյունավետ իրականացումը, և նման պարագայում սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի

1-ին և 3-րդ կետերը, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հետաքննության մարմնի լիազորությունները» վերտառությամբ 57-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ «Հետաքննության մարմինը՝ ... հայտնաբերված հանցագործության և գործով սկսված հետաքննության մասին անհապաղ տեղյակ է պահում դատախազին և քննիչին» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից ելնելով այն իրավակիրառ պրակտիկայում չի կարող մեկնաբանվել որպես «հայտնաբերված հանցագործության» և «գործով սկսված հետաքննության» եզրույթների՝ «և» շաղկապով տարանջատված միաժամանակյա անհրաժեշտ պայմանների ամրագրում՝ կիրառելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության իրավակարգավորումը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 փետրվարի 2016 թվականի
ՍԴՈ-1253



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԴԱՎԻԹ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ՎԱՐՏԳԵԶ ԳԱՍՊԱՐԻԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ
ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 156-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 5-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 160-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-
ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

9 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-
յանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ.
Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողներ Կ. Հարությունյանի, Ա. Գևորգյանի, Դ. Հարությունյանի, Վ.
Գասպարիի և նրանց ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Տ. Սաֆարյանի
և Տ. Եգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժո-
ղովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատա-
կազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի
գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005
թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդ-
վածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ
օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Կարեն Հարու-

թյունյանի, Արտակ Գևորգյանի, Դավիթ Հարությունյանի, Վարդգեզ Գասպարիի դիմումների հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Կարեն Հարությունյանի, Արտակ Գևորգյանի և Դավիթ Հարությունյանի, Վարդգեզ Գասպարիի՝ համապատասխանաբար 2015 թվականի օգոստոսի 19-ին, նոյեմբերի 9-ին և դեկտեմբերի 24-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի ՍԴԱՌ-55, 2015 թվականի դեկտեմբերի 4-ի ՍԴԱՌ-74 և 2016 թվականի հունվարի 19-ի ՍԴԱՌ-3 աշխատակարգային որոշումներով դիմումներն ընդունվել են քննության, և, սահմանադրական դատարանը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, որոշել է մինչև դատաքննությունն սկսվելը նշված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը սահմանում են.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի,

...

5. Սույն հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո բերված վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և դատարանն այն բավարարել է»:

Օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը բացակայում է կամ մերժվել է. ... »:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2.1. Կարեն Հարությունյանի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Կարեն Հարությունյանի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանի՝ 25.07.2014թ. որոշմամբ հայցը բավարարվել է: ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ Կարեն Հարությունյանի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինս 18.12.2014թ. որոշմամբ ներկայացված բողոքը մերժել է՝ անփոփոխ թողնելով ՀՀ վարչական դատարանի՝ 25.07.2014թ. որոշումը: Նշված որոշման դեմ Կարեն Հարությունյանի ներկայացուցիչը վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պահանջելով բեկանել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ գործի վարույթը կարճել: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը 11.02.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ նշելով, որ. «Տվյալ դեպքում բողոք բերած անձին վերաքննիչ դատարանի՝ 18.12.2014 թվականի որոշումն ուղարկվել է 19.12.2014 թվականին, այն ստացվել է 20.12.2014 թվականին, վերաքննիչ դատարանի 18.12.2014 թվականի որոշման դեմ սույն վճռաբեկ բողոքը փոստին է հանձնվել 20.01.2014 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը լրանալուց 1 օր հետո, և չի ներկայացվել միջնորդություն վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և ժամկետը վերականգնելու մասին»:

2.2. Արտակ Գևորգյանի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Արտակ Գևորգյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանի 10.02.2015թ. որոշմամբ հայցը բավարարվել է: ՀՀ վարչական դատարանի նշված որոշման դեմ Արտակ Գևորգյանի ներկայացուցիչը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինս 10.06.2015թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է, և ՀՀ վարչական դատարանի 10.02.2015թ. որոշումը թողել անփոփոխ: Նշված որոշման դեմ Արտակ Գևորգյանի ներկայացուցչի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 26.08.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը «... վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարան

է ներկայացրել 22.07.2015 թվականին (հիմք՝ փոստային ծրար), այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո և չի ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդություն»:

2.3. Դավիթ Հարությունյանի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Դավիթ Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանի 05.11.2014թ. վճռով հայցը բավարարվել է: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 24.06.2015թ. որոշմամբ Դավիթ Հարությունյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 05.11.2014թ. վճիռը թողնվել է անփոփոխ: Նշված որոշման դեմ Դավիթ Հարությունյանի ներկայացուցչի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 26.08.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը «... վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարան է ներկայացրել 27.07.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո և չի ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդություն»:

2.4. Վարտգեզ Գասպարիի դիմումի մասով.

ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով Վարտգեզ Գասպարիին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանի 02.10.2014թ. վճռով հայցը բավարարվել է: Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.04.2015թ. որոշմամբ մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 02.10.2014թ. վճիռը թողնվել է անփոփոխ: Նշված որոշման դեմ Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանը 03.06.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ պատճառաբանելով, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքը «...ներկայացրել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո: Միաժամանակ, բողոք բերած անձը միջնորդություն է ներկայացրել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին ...: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ... ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագրի համաձայն՝ վերջինս Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 10.04.2014 թվականին, մինչդեռ վճռաբեկ բողոքը ներկայացվել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված վճռաբեկ բողոք բերելու ժամ-

կետի ավարտից հետո: ... : Այսինքն, բողոք բերած անձի միջնորդությունը հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու վերաբերյալ Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի փաստարկը հիմնավոր չէ, մասնավորապես՝ 10.04.2014 թվականից մինչև 11.05.2015 թվականը ժամանակահատվածի համար որևէ պատճառաբանություն չպարունակելու պատճառով»:

3. Դիմողները՝ վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, նշում են, որ վերջիններիս բովանդակությունը հանգում է նրան, որ նույնիսկ բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (օրինակ՝ դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալու պատճառով) վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված մեկամսյա ժամկետը «բաց թողնելու», այն հարգելի համարելու, վճռաբեկ բողոքը դատական ակտն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնելու իրավունքն իրացնելու համար բողոքաբերը պետք է առանձին միջնորդությամբ խնդրի վճռաբեկ դատարանին թույլ տալ իրացնելու իր իրավունքը, իսկ վերջինիս հայեցողության սահմաններն ու շրջանակները որևէ կերպ սահմանված չեն օրենքով: Դիմողները գտնում են նաև, որ դատական ակտի բողոքարկման համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը նշանակում է, որ բողոքաբերը կարող է իր բողոքը ներկայացնել այդ ժամկետում՝ ցանկացած օր, այդ թվում՝ ժամկետի վերջին օրը: Տվյալ դեպքում բողոքաբերը, բացի բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու, բողոքի հիմնական թեզերը վստահորդի հետ քննարկելու, մշակելու, համաձայնեցնելու գործողություններից, կախված իր աշխատանքային ծանրաբեռնվածությունից, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներից, ինքն է որոշում այդ հանգամանքների հաշվառմամբ բողոքարկման մեկամսյա ժամկետում բողոքը ներկայացնելու հնարավոր օրը, որը որոշակի դեպքերում կարող է լինել նաև սահմանված ժամկետի վերջին օրը: Մինչդեռ բողոքաբերի կամքից անկախ պատճառով, ինչպիսին է փոստային առաքմամբ բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալը, իր բողոքը ներկայացնելու համար սահմանված ժամկետը կարճանում է, եթե բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկվի ակտի հրապարակման, այլ ոչ թե դրա ստացման օրվանից: Ընդ որում, այս դեպքում որևէ նշանակություն չունի, թե քանի օր ուշացումով է բողոքաբերն ստանում դատական ակտը:

ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում և վճիռներում ամրագրված իրավական դիրքորոշումների վրա հիմնվելով՝ դիմողները կարծում են, որ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետի

փոխարեն ավելի կարճ ժամկետում այդ գործողությունը կատարելու պարտականություն սահմանելը և դա բողոքաբերի վրա դնելը դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է:

Համադրված կարգով վերլուծելով վիճարկվող դրույթները՝ դիմողները եզրահանգել են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու՝ դատարանների պարտականությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18-րդ, 19-րդ հոդվածներին և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

4. Պատասխանողը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթները և 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 18 և 19-րդ հոդվածներին:

Պատասխանողի կարծիքով, թեև գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկվում է դրանց հրապարակման պահից, այդուհանդերձ, օրենսդիրն իրավական երաշխիքների ամրագրմամբ ապահովել է անձանց բողոքարկման իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունը: Օրենսդիրը սահմանել է նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու իրավական հնարավորություն: Այն իրենից ներկայացնում է որոշակի իրավական ընթացակարգ, որի շրջանակներում դատարանը գնահատում է դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունը:

Անդրադառնալով ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 և ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՄԴՈ-1052 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ պատասխանողը գտնում է, որ բաց թողնված ժամկետի վերականգնումն այն հարցերից է, որտեղ դատարանը հայեցողություն դրսևորելու իրավասություն ունի, սակայն դատական հայեցողությունը պետք է իրականացվի ոչ թե կամայական, այլ օրենքի շրջանակներում: Բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցում վճռորոշը պատճառների հարգելիությունն է, որը ելակետային է համարվում դատարանի կողմից որոշում կայացնելիս:

Ըստ պատասխանողի՝ միջազգային պրակտիկայում բաց թողնված ժամկետի վերականգնման հարցում իրավական կարգավորումներն

էապես տարբերվում են: Սակայն պատասխանողը նույնպես փաստում է, որ, որպես կանոն, հարգելի են համարվում այն դեպքերը, երբ անձն օբյեկտիվորեն, իրենից անկախ պատճառներով հնարավորություն չի ունեցել օրենքով սահմանված ժամկետում բողոք ներկայացնել:

Անդրադառնալով դատարանների հայեցողական լիազորությունների իրավաչափ իրականացման հարցին՝ պատասխանողը կարծում է, որ ոչ միասնական կամ հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառնալիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս:

Վերջում պատասխանողը գտնում է, որ դիմողները դատական ակտերն ստացել են ժամանակին, չեն պահպանել բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ օրենքով սահմանված ընթացակարգը, ուստի դատարանն ընդհանրապես քննարկման առարկա չի դարձրել ժամկետի բացթողման պատճառների հարգելիության հարցը: Պատասխանողի կարծիքով՝ դիմողների իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ օրենքի նորմի սահմանադրականությամբ, այլ կապված է նրանց կողմից օրենքի պահանջները չպահպանելու հանգամանքի հետ: Հետևաբար՝ առկա է սույն գործի վարույթը կարճելու հիմք:

5. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3 և 81-րդ հոդվածներ),

- ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

ա) դիմումների և դրանցում ներկայացված հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք, ըստ էության, վերաբերում են ոչ թե ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասին՝

ամբողջությամբ, այլ միայն այդ մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը» դրույթին,

բ) դիմումների մուտքագրման պահին գործել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2005 թվականի փոփոխություններով, և դիմողները վիճարկվող իրավադրույթները վիճահարույց են համարել Սահմանադրության այդ խմբագրությամբ 18 և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, ուստի սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համատեքստում:

6. ՀՀ սահմանադրական դատարանը նույն հարցի առնչությամբ իր ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062 և ՍԴՈ-1249 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները հաշվի առնելով և դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմնախնդրին առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ու առանձին երկրների իրավական պրակտիկայի վերլուծության արդյունքներով՝ սույն գործի քննության շրջանակներում վերահաստատում է նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ **օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքն արդյունավետ իրացնելու համար:**

Սահմանադրական դատարանը սույն գործի քննության առարկայի շրջանակներում կարևորում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ(2004)20 հանձնարարականը, որով սահմանվել են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առանձին իրավական չափորոշիչներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ա) վարչական ակտի բողոքարկման համար ողջամիտ ժամկետի տրամադրմանը (կետ 46), բ) վարչական ակտի օրինականության վիճարկման համար ողջամիտ ժամկետի սահմանմանը (կետ 47), գ) վարչական ակտի մասին անձին ծանուցելու պահի՝ որպես բողոքարկման ժամկետի հաշվարկման մեկնարկին (կետ 48):

Այսպես, հիշատակված հանձնարարականի 46-րդ կետով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մասնակից պետություններին առա-

ջարկվում է «... երաշխավորել ողջամիտ ժամկետի տրամադրում կողմերին դատարանում գործեր հարուցելու համար», ընդ որում, պարտադիր հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Եթե հայցադիմումներ ներկայացնելու ժամկետը շատ կարճ լինի, ապա կողմերը զրկված կլինեն վարչական ակտը բողոքարկելու հնարավորությունից»: Նույն հանձնարարականի 47-րդ կետով մասնակից պետություններին պարտավորեցվում է սահմանել ողջամիտ ժամկետ դատարանում վարչական ակտի օրինականության վիճարկման համար՝ դատական վերանայման մատչելիության արդյունավետությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ազգային օրենսդրությամբ հստակեցնելով «ողջամիտ ժամկետ» եզրույթը:

Միաժամանակ, նույն հանձնարարականի 48-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն առաջարկում է մասնակից պետություններին հաշվի առնել այն, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետի ընթացքի սկիզբն ուղղակիորեն չպետք է կապել այն պահի հետ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իմացել է կամ պետք է իմանար համապատասխան ակտի մասին, **ակնհայտ է համարում, որ այդ ժամկետի հաշվարկն սկսվում է այդ ակտի մասին անձին ծանուցելու պահից**, և, այդ հանգամանքով պայմանավորված, մասնակից պետություններին առաջարկում է նաև համապատասխան ակտի մասին անձին ծանուցելու պահը սահմանել որպես բողոքարկման ժամկետի հաշվարկի սկիզբ:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է՝ չնայած այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, անհրաժեշտ են օրենսդրական բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը:

7. Սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ.

ա) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՄԴՈ-1052 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՄԴՈ-1062 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների տրամաբանության հետ,

բ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՄԴՈ-1052 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի իրավակարգավորումների

տրամաբանության հետ,

զ) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման տրամաբանությունը համադրելի է ՍԴՈ-1249 գործով քննության առարկա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իրավակարգավորման տրամաբանության հետ:

Վերոնշյալ եզրահանգումների հիման վրա, հաշվի առնելով ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062 և ՍԴՈ-1249 որոշումներում քննության առարկա դարձած դրույթների և սույն գործով վիճարկվող դրույթների բովանդակային համարժեքությունը, փաստելով, որ նշված որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները կիրառելի են նաև սույն գործով քննության առարկա դրույթների առնչությամբ, սահմանադրական դատարանը հիմք է ընդունում հիշյալ որոշումներում քննության առարկա դարձած դրույթների սահմանադրականության հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես, իր ՍԴՈ-1249 որոշման մեջ սահմանադրական դատարանը նշել է. «...երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով»:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դիմողներից Վարտգեզ Գասպարին վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է նաև բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույց (համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագիրը), որով հավաստվել է, որ Վարտգեզ Գասպարին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումն ստացել է 2015 թվականի ապրիլի 10-ին: Դա փաստվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Վճռաբեկ դատարանը 2015 թվականի հունիսի 3-ին թիվ ՎԴ/0277/05/14 վարչական գործով կայացրել է որոշում «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին»՝ նշելով, որ «... բողոք բերած անձի միջնորդությունը

հիմնավոր չէ և ենթակա է մերժման, քանի որ ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու վերաբերյալ Վարտգեզ Գասպարիի ներկայացուցչի փաստարկը հիմնավոր չէ, մասնավորապես՝ 10.04.2014 թվականից մինչև 11.05.2015 թվականը ժամանակահատվածի համար որևէ պատճառաբանություն չպարունակելու պատճառով»։ Անհասկանալի է նման եզրահանգումը, եթե նկատի ունենանք, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումն ընդունվել է 07.04.2015 թվականին։

Հիշատակված որոշման կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել՝ չնայած այն հանգամանքին, որ նշված որոշման մեջ թվով 6 դեպքերում «2015 թվականի» փոխարեն թվագրվել է «2014 թվականը», այդուհանդերձ, ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես հավաստում է, որ ներկայացվել է դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը հավաստող, վկայող ապացույցը՝ համապատասխան ուղեկցական գրությանը կից փոստային հավաստագիր։ Միաժամանակ արձանագրվել է, որ այդ հավաստագրի համաձայն՝ դիմողը «Վերաքննիչ դատարանի որոշումը ստացել է 10.04.2014 թվականին, մինչդեռ վճռաբեկ բողոքը ներկայացվել է 11.05.2015 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված վճռաբեկ բողոք բերելու ժամկետի ավարտից հետո»։ Սակայն հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ 2015 թվականի մայիսի 10-ը եղել է ոչ աշխատանքային օր, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտման օրը դրան հաջորդող աշխատանքային օրն է»։

Գործի նյութերը վկայում են, որ այս նորմի կիրառման հարցում դատական պրակտիկայում տեղ են գտել տարակերպ մոտեցումներ և չի երաշխավորված օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական պահանջը։

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ տվյալ գործի քննության շրջանակներում հետևողականորեն հաշվի չեն առնվել նաև հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի վերոնշյալ՝ ՄԴՈ-1052 և ՄԴՈ-1062 որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները։

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062 և ՄԴՈ-1249 որոշումների ընդունումից հետո դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը համապատասխան օրենսդրական համալիր կանոնակարգումների չի ենթարկվել՝ դրանով իսկ չեն իրացվել ՀՀ սահմանադրական դատարանի վերը հիշատակված

որոշումներում ամրագրված հստակ և հետևողական իրավական դիրքորոշումները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա հարցով օրենսդրական կանոնակարգումներն անհրաժեշտ են, մասնավորապես, քրեական դատավարական, քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական միասնական քաղաքականության շրջանակներում դատական ակտերի վերաբերյալ բողոք ներկայացնելու նախապայմանների մասով համարժեք լուծումներ գտնելու նպատակով:

Այս հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներին», ինչը ենթադրում է, որ սահմանադրական դատարանի որոշումներն իմաստ ու բովանդակություն են ստանում, դառնում են իրավունքի աղբյուր իրենց ամբողջականության մեջ՝ հիմքում ունենալով նույն որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այս համատեքստում սահմանադրական դատարանը դրական է համարում այն, որ նշյալ հանգամանքի մասին է փաստում նաև սույն գործի շրջանակում 2015 թվականի նոյեմբերի 30-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված բացատրության շրջանակներում պատասխանող կողմի պաշտոնական ներկայացուցչի այն պնդումը, որ «... ոչ միասնական կամ հակասական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումն առհասարակ կանխելու նպատակով նպաստավոր կլինի օրենսդրորեն սահմանել դատավարական ժամկետի բաց թողնման հարգելիության այն չափանիշները կամ հիմքերի մոտավոր, ոչ սպառիչ շրջանակը, որը յուրաքանչյուր դեպքում դատարանների համար ելակետային կհանդիսանա բաց թողնված ժամկետի հարգելիությունը գնահատելիս»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ

սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 և ՍԴՈ-1062 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) ճանաչվում է հարգելի:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով (ex jure) չի ճանաչվում հարգելի:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1249 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով (ex jure) հարգելի ճանաչելը:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 12-րդ մասի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից ելնելով՝ դիմող Վարտգեզ Գասպարիի գործով ընդունված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9 փետրվարի 2016 թվականի
ՍԴՈ-1254

ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2016 թվականի մարտի 12-ին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիազուար նիստը հաստատեց ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի նախաձեռնությունը՝ կազմակերպել սահմանադրական վերահսկողությանը նվիրված խորհրդաժողով:

Հանձնաժողովը Գ. Հարությունյանին հանձնարարեց պատրաստել և Վենետիկի հանձնաժողովի 107-րդ լիազուար նիստին ներկայացնել վերոնշյալ միջոցառման անցկացման վերաբերյալ համապատասխան հայեցակարգը և կազմակերպչական մեխանիզմները, որի շրջանակներում անդրադարձ կկատարվի նաև «Իրավունքի գերակայության հիմնական չափորոշիչների ցանկի» (ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիազուար նիստի ընթացքում) կիրառմանը համակարգային սահմանադրական վերահսկողության գործընթացում:

Սահմանադրական վերահսկողությանը նվիրված միջազգային խորհրդաժողովի գումարման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- ժամանակակից հասարակության մեջ սահմանադրականության պալկասի հաղթահարման համար անրաժեշտ առավել արդյունավետ իրավական մեխանիզմների զարգացումով, ինչպես նաև բացասական սոցիալական լիցքերի կուտակումից խուսափելու հանգամանքով, ինչը, կրիտիկական զանգվածի հասնելուց հետո, կարող է հանգեցնել սոցիալական կատակլիզմի,

- Սահմանադրության կայուն և դինամիկ գերակայության երաշխավորման համար անհրաժեշտ անկյունաքարերի բացահայտմամբ և դատական սահմանադրական վերահսկողության ապահովման մեխանիզմների ամրապնդմամբ,

- իրավունքի գերակայության արդյունավետ երաշխավորմամբ, ինչպես նաև կայուն ժողովրդավարական զարգացման ապահովմամբ,

- համակարգային սահմանադրական վերահսկողության իրականացման մեխանիզմների ամբողջականացման վերաբերյալ հստակ խորհրդատվության ձևավորմամբ, ինչը հաշվի կառնի նաև «Իրավունքի գերակայության հիմնական չափորոշիչների ցանկի» կիրառումը տարբեր երկրներում:

Առաջարկվեց ս.թ. հոկտեմբերի 20-23-ին Երևանում կազմակերպել վերոնշյալ թեմայով եռօրյա խորհրդաժողով՝ այն մեկտեղելով Երևանյան ամենամյա միջազգային խորհրդաժողովի աշխատանքներին, որոնք նվիր-

ված են սահմանադրական արդարադատության հրատապ հիմնախնդիրներին:

Քննարկման համար առաջարկվում են հետևյալ երեք հարցերը.

1. Սահմանադրական դատարանների դերն իրավական բացերի և իրավական անորոշության հաղթահարման գործում,

2. Համակարգային սահմանադրական մշտադիտարկման դերը և տեղը սահմանադրական վերահսկողության համակարգի ամրապնդման և սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման գործում,

3. «Իրավունքի գերակայության հիմնական չափորոշիչների ցանկի» դերն ու նշանակությունը մշտական սահմանադրական ախտորոշման և մշտադիտարկման իրականացման գործում:

Առաջարկվում է յուրաքանչյուր թեմայի շուրջ ներկայացնել 20-25 բույե տևողությամբ երկու զեկույց:

Քննարկումների ընթացքում յուրաքանչյուր մասնակցին կտրամադրվի 10 բույե զեկույցի և 3 բույե հստակ խորհրդատվական առաջարկությունների ներկայացման համար:

Սույն խորհրդաժողովի աշխատանքներին ակտիվ մասնակցության նախնական պատրաստակամություն են հայտնել ավելի քան քսան երկրի սահմանադրական դատարանների պատվիրակություններ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործող տասնհինգ դատավոր և պաշտոնաթող երեք դատավոր:

ՀԱՄԱՏԵՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 20-22-ին տեղի ունեցան Ավստրիայի եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանների համատեղ քննարկումները սահմանադրական արդարադատության երեք հրատապ թեմաների շուրջ:

Հայաստանի Հանրապետության եւ Ավստրիայի սահմանադրական դատարանների նախագահները հանդես եկան «Սահմանադրական դատարանի դերը հիմնարար իրավունքների անմիջական գործողության ապահովման գործում» թեմայով զեկույցներով:

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Ալվինա Գյուլումյանը եւ Ավստրիայի սահմանադրական դատարանի դատավոր Ինգրիդ Սիես-Սիերգանդը զեկույցներ ներկայացրեցին «Մարդու իրավունքների եվրո-

պական կոնվենցիայով երաշխավորված կոնվենցիոն իրավունքների կապակցությամբ սահմանադրական դատարանի նախադեպային պրակտիկան» թեմայով:



«Սահմանադրական դատարանի որոշումների կատարման վիճակն իրավական պրակտիկայում» թեմայով զեկուցումներով հանդես եկան ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Արեւիկ Դետրոսյանը եւ Ավստրիայի սահմանադրական դատարանի դատավոր, պրոֆեսոր

Լայնբախերը:

Զեկույցների շուրջ ծավալված երկօրյա քննարկումներին Ավստրիայի սահմանադրական դատարանը մասնակցում էր ամբողջ կազմով:

Նման համատեղ մասնագիտական քննարկումների կազմակերպումը սահմանադրական արդարադատության ոլորտում փորձի փոխանակման ու միջազգային համագործակցության առավել արդյունավետ ձև է:

Ավստրիան աշխարհում առաջին սահմանադրական դատարան ստեղծած երկիրն է /1920թ./, ունի այս ոլորտում հսկայական փորձ ու միջազգային առաջատար դերակատարություն: Հայաստանի Հանրապետության եւ Ավստրիայի սահմանադրական դատարանների ակտիվ համագործակցությունը դարձել է ավանդական ու նաեւ կարեւոր նշանակություն է ստացել սահմանադրական արդարադատության նոր մարտահրավերներին դիմակայելու համատեղ մոտեցումների մշակման առումով:

ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԿԿԱՅԱՆԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 9-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի բյուրոյի անդամ պրն Գ. Հարությունյանը մասնակցեց Վենետիկի Հանձնաժողովի բյուրոյի նիստին, ուր քննարկվեցին Հանձնաժողովի 107-րդ լիազումար նիստի աշխատանքների կազմակերպման հարցերը: Բյուրոյի նիստին հաջորդեց պրն Գ. Հարությունյանի աշխատանքային հանդիպումը Վենետիկի Հանձնաժողովի

Նախագահ, պրն Զ. Բուքիքիոյի և Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի գլխավոր քարտուղար պրն Շ. Դյուրի հետ, որի ընթացքում քննարկվեցին ս. թ. հոկտեմբերի 20-23-ը Երևանում հրավիրվելիք համաեվրոպական խորհրդաժողովի հայեցակարգին առնչվող հարցեր...

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԻ ԱՅՑԸ



Հունիսի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թիմուր Ուրազաեւին:

Ողջունելով հյուրին, պարոն Հարությունյանը նրան

շնորհավորեց նշանակման կապակցությամբ, մաղթեց արդյունավետ, բեղմնավոր գործունեություն: Նա նաեւ դեսպանի միջոցով շնորհավորանքներ հաղորդեց Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի նախագահ Իգոր Ռոգովին՝ հունիսի 14-ին վերանշանակման առիթով:



Հանդիպմանը քննարկվեցին ՀՀ սահմանադրական դատարանի եւ Ղազախստանի Հանրապետության սահմանադրական խորհրդի միջեւ համագործակցության այսօրվա եւ հեռանկարի հետ կապված հարցեր: Զրույցի ընթացքում կողմերն իրենց տեսակետներն արտահայտեցին, որ ինչպես

այդ, այնպես էլ ընդհանրապես դատաիրավական ոլորտում հետագա համագործակցության մեծ հեռանկարներ կան եւ, ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կառույցների շրջանակներում, իրենց արդյունավետ համագործակցությունը հետագայում նույնպես պետք է զարգացնել:

ՀՅՈՒՐԵՐ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 22-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Ռամկավար ազատական կուսակցության ներկայացուցիչներին՝ ՌԱԿ-ի Կենտրոնական վարչության ատենապետ Սերխիո Նահապետյանի գլխավորությամբ:

Հյուրերը հետաքրքրեցին Հայաստանում տարվող սահմանադրական զարգացումներով, Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունների հետագա զարգացման ու համագգային խորհրդի ձեւավորման հարցերով:

Այս հարցերի վերաբերյալ պարոն Հարությունյանը տվեց որոշ պարզաբանումներ:

ՄԴ մամուլի ծառայություն

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-588-171
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 22.06.2016թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՍԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 3(81) 2016
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 3(81) 2016
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 3(81) 2016